

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՀԵՐՈՍՆԵՐԸ

Վերջին եղբրական դեպքերէն յետոյ, չեմ գիտեր թէ հայ հոգի ո ե է անկին մը կարելի պիտի ըլլայ այս տարի Վարդանանց տօնը տօնել: Բայց աստիճանով եմ որ, ինչքան ալ ճնշումը մեծ ու յուսահատութիւնը խորին ըլլայ, սուգին, սարսափին, ցարտին ու սովին մէջէն, փետրուար 24ի օրը, ամէն Հայու մտքին մէջ մեծապայծառ պիտի շողայ Մարտիրոս—Հերոսին կարմիր յիշատակը, եւ մութ անկիւններու մէջ, տենդաւ մասններ Եղիշէի էջեր պիտի թղթատեն:

Մեր մեծ տօնը, մեր յաւիտենական տօնն է ան: Տօնը որով ազդ մը իր հոգին կը փառաբանէ, իր գոյութիւնը կը հաստատէ: Վարդանը հայ ցեղին խորհրդանշանական դէմքն է: Գաղափար—անձնաւորութիւնն է ան, ազգ—մարդը: Փրանսացիները ժան տ'Առը ունին, մենք Վարդանը ունինք: ժան տ'Առը ֆրանսական ժողովրդին յիմարական խանդավառութիւնն է որ կը ցցուի թշնամիին դէմ, երկրին բոլոր ուժերը միեւնոյն շունչով կը միացնէ վտանգին հանդէպ, եւ ֆրանսական Հայրենիքը կը հաստատէ: Վարդան հայ ցեղին յամառ ու անձնուէր կորովն է որ հին հեթանոս Ասիային դէմ կ'ապստամբի եւ նոր Հայութիւնը կը հիմնէ:

Յաղթական թագաւորներ, իմաստուն վարիչներ, մեծագոր սուրբեր ունեցած ենք. եւ սակայն ո՛չ մէկ անուն այնքան գուրգուրանքով ու պաշտօնով տարածուած է մեր մէջ որքան Վարդանինը. զրօշակ—անունն է ան: Մեր հին գրականութեան ամենէն կենդանի գիրքը այն է ուր Վարդանին պատմութիւնը կ'երգուի: Մեր հին ու նոր բանաստեղծներուն ամենէն սիրական նիւթը՝ հրեղէն հէքեմթիւն է Աւարայրի կռիւին: Ժողովուրդը իր անձնաւորումը տեսած է այդ անվեհեր մարտիկին մէջ որ մահուան դիմեց պահպանելու համար ազգային հաւատքը, այսինքն ազգային ինքնութիւնը:

Քրիստոնէութենէն առաջ, հայ ցեղը մեծ օրեր ունեցած է, բայց դեռ ազգը վերջնական որոշ ձեւ մը չէ ըստացած. Ասիոյ բազմաթիւ հեթանոս պատերազմիկ ցեղերէն մէկն է, Պարթեւներուն մէկ ճիւղը կը թուի: Իր ինքնութիւնը կը շեշտուի այն օրէն երբ, պարսիկ եւ հռոմայեցի կրկին ազդեցութեանց միջեւ բաժնուած, կ'որոշէ Ասիական սփիւն կոնակ զարձնել եւ ձգտել դէպի Արեւմուտքի քաղաքակրթութիւնը: Քրիստոնէութիւնը մեր մէջ կը

հաստատուի, եւ այն տոնն ցեղը յասակօրէն կ'անջատուի պարսիկ տարրէն եւ բովանդակ ասիական զանգուածէն, ինք իր մէջ կը սեղմուի, կը խտանայ, ուրոյն կեանք եւ ուրոյն գոյն կ'ունենայ: Նոր կրօնքը իր հետ կը բերէ միանգամայն արեւմտեան զարգացումը. լեզուն կը ձեւակերպուի եւ մինչեւ այն աստիճանը որ զորով լեզուները վանելով ամբողջ ժողովրդին մտաւորական կապը կը դառնայ, զրականութիւն մը կը սկսի, ազգը իր գոյութեան գիտակցութիւնը կ'ունենայ: Ու այնուհետեւ տաժանելի եւ գեղեցիկ դերը կը ստաննենք Ասիոյ մէջ Արեւմտեան քաղաքակրթութեան յատաշատահ գունդն ըլլալու: Այդ գերը Վարդանանց դէպքէն ծագում կ'առնէ: Անկից առաջ Արշակունի թագաւորներուն ու նախարարներուն վրայ հեթանոսական գոյն մը, ասիական դրոշմ մը կայ գեռ. կրօնականներն են միայն որ նոր ոգին կը ներկայացնեն, ազնիւ խանդով մը ապագայ շէնքին հիմքը կը դնեն, զուտ ազգային ու յառաջդիմական տարրը կը կազմեն. եւ երբ նախարարներուն անմիաբանութեամբն ու մատնութեամբը՝ Արշակունի թագաւորութիւնը կը կործանի, Եկեղեցին է որ ազգին անկախ անջատ գոյութիւնը կ'ապահովէ, ցըրուած ու պառակտած անգամներուն միջեւ մեծ ներքին կապը կը դառնայ, կը շարունակէ հայ միաբն արեւմտեան աշխարհին հաղորդաւորել, կ'արգիլէ ցեղը՝ պարսիկ տարրին խառնուելէ: Եւ ժողովուրդը խորապէս կը զգայ թէ իր գոյութիւնը Եկեղեցիին կեանքէն կախուած է: Այնպէս որ երբ պարսիկ պետութիւնը կը բռնաբաստէ Հայերը մոգութիւն ընդունիլ, ազգը միահողոյն կը ցցուի այդ կործանարար կամքին դէմ, եւ իր յամառ դիմադրութեամբը, իր հիանալի անձնագոհութեամբը կը յաջողի իր կեանքը պահպանել: Վարդան Մամիկոնեան այդ ամբողջ ազգային—կրօնական շարժումը կը ներկայացնէ. ինքը եղաւ առաջինը որ օրինակը սուրբ Գաղափարին համար կուրծելու եւ մեռնելու: Վարդանէն յետոյ, ամբողջ Հայոց պատմութիւնը կրկնութիւնն է Վարդանեան արարքին: Վարդանէն սկսեալ, Հայը քրիստոնէութեան զինուորը կը դառնայ հեթանոս ու մահմեդական Ասիային դէմ, եւ իր ցաւազին ու երկայն ճիւղերովը անոր դէպի Եւրոպա հեղեղումը կը մեղմացնէ եւ յապաղեցնէ, եւ ո՛չ միայն կը յաջողի իր անվկանդ դիմադրութեամբը՝ իր ուրոյն գոյութիւնը անեղծ պահել, այլ եւ կը մնայ Եւրոպական Գաղափարին ներկայացուցիչը Փոքր—Ասիոյ մէջ: Բիւզանդեան կայսրութիւնը իրեն կրտսեր եղբայր ունեցաւ Բագրատունեաց թագաւորութիւնը: Խաչակիրները իրենց արշաւանքին մէջ Հայերը դասն դաշնակից՝ Ասիական հոսանքին դէմ: Ա-

ոանց Վարդանանց արարքին, թերեւ հայ տարրը պարսկութեան մէջ հալած ըլլար, եւ այն աստի թերեւ ամբողջ փորք-Ասիա մահմետական ըլլար այսօր: Աշխարհ զեւ կ'անգիտէ մեր ցեղին այս գերը. եւ մենք իսկ տիեզերական պատմութեան մէջ մեր կատարած ճշմարիտ գործին զիտակցութիւնը չունինք. մենք մեղ չենք ճանչնար ինչպէս որ պէտք է. ապա թէ ոչ պիտի շատանց համոզուած ըլլայինք թէ հպարտանալու իրաւունք տուող շատ աւելի կարեւոր արժանիք մը ունեցած ենք քան Աղամին գրախաղ պարունակող հայրենիք մը եւ Յիսուսին հետ թղթակցող թագաւոր մը ունեցած ըլլալու տոասպելական արժանիքը:

Պատմական քննադատութիւնը վճռական ուսումնասիրութեամբ մը զեւ չէ յուսաւորած Վարդանեան շրջանին ճշգրիտ նկարագիրը: Եղիշէի գիրքը՝ պատմութեանէ աւելի բերթուած մըն է. սեր ազգային զիւցազնեղութիւնն է ան. եւ շատ հաւանական է որ սխալներ, ծայրայեղութիւններ եւ անիրաւութիւններ պարունակէ. մտածողներ եւ զած են թէ Վաստի մասնիչ մը չէր, այդ զիւսնադէտ մը, որ կ'ուզէր հայրենիքը փրկել ոչ թէ բուռն ու ազիտաբեր այլ խորազէտ ու հանդարտ միջոցներով: Բայց ժողովուրդը Եղիշէին հաւատացած է, Վարդանին յարած եւ անոր հետեւած է: Ժողովուրդը միշտ խանդավառներուն կը հետեւի. եւ իրաւունք ունի: Խանդավառներն են որ ազգի մը հոգին կը շինեն. նորէն անոնք են որ, անկման օրերուն, զանի կը վերանորոգեն. անոնք ստեղծագործներն են. հանդարտ եւ խոհեմ մտքերը կը կազմակերպեն ու կը կատարելագործեն ինչ որ յանդուգն եւ անձնուէր հոգիները ուրուադծած են: Ճարտար ու հաշուազէտ ընթացավարութիւնը ազգի մը տեւական զօրութիւնը, հիմնական առկունսութիւնը կ'ապահովէ, ազգին միան ու ստիպող կը կազմէ, եւ անշուշտ այնչափ կարեւոր է որչափ խանդը, որ արդէն՝ միս մինակ՝ ազիտաբեր կրնայ ըլլալ: Բայց ժողովուրդը խանդը միայն կը տեսնէ, անոր կը նուիրէ իր պաշտօնունքն ու հիացումը: Խանդավառներն են որ ազգի մը կորովը իր բարձրագոյն կատարներուն կը հասցնեն. Յըրանայի մեծութեան սիւները իր աւիւնի գեմքերն են, Ժան ա'Աբըր, Տանգունը, Նաբոլէանը: Ասոնք ժողովուրդին հոգին կ'ընդարձակեն, քաջութիւնը կ'աճեցնեն. ասոնք իրենց ծայրայեղութեամբն իսկ իրականութենէն զուրս կ'ելլեն, խորհրդանշաններ կ'ըլլան եւ ուժ կը ներշնչեն ամբարխին. անոնց անցքէն յետոյ, ազգ մը ինքզինքը աւելի հարուստ կը դառնայ հանձարով, աւելի առոյգ անուականութեամբ: Ասոնք ժողովուրդի մը սիրտն են. եւ առանց այդ տաք բախտումին, ժողովուրդ մը չի կրնար կենդանի մնալ: Մեր մէջը Փաւստոս Բիւզանդացիէն աւելի, որ ստուգապատու ժամանակագիր մըն է, ժողովուրդական եղած է խորենացին, որ բանաստեղծ մըն է պատմական անճշտութիւններով լեցուն: Բիւզանդացին շրջանի մը պատկերը գծած է, խորենացին իր հայրենասէր հոգիովը ամբողջ բարոյական շէնք մը կ'անգնած է, հերոսներ երկնած է, հպարտացող եւ կազուրբող զլացումներ ներշնչած է, Հայաստանը ստեղծած է: Վահան Մամիկոնեան, միանգամայն քաջ սողմիկ եւ ճարտար զիւսնադէտ, կատարեալ ախպարն է ազգային վարիչի, բայց ժողովուրդին հոգիին մէջ Վահանէն շատ վեր, ամենէն պայծառ լոյսին մէջ, Վարդանին գեմքն է որ կը կ'անգնի, որովհետեւ Վարդան մեծնիլ սորվեցուց: Եւ, կը կրկնեմ, ժողովուրդը իրաւունք ունի: Առանց Վարդանեաններուն խիզախ շարժումին, միմիայն խորամանկութեան եւ ճարտիկ համակերպութեան վրայ հիմնուելով, շատ հաւանական է որ Հայ ժողովուրդին կորովը պիտի թուլնար, ինք իր վրայ հաւատաք պիտի նուազէր, եւ պարսկացումը, որ արդէն մասամբ սկսած էր Վարդանանց գեպքէն առաջ, պիտի ընդհանրանար: Վարդանանց արարքը թօթիկաց ազգը, զանի վերանորոգեց, պարսիկ վիթխարի զօրութեան գեմ այդ փոքրիկ խումբին անվհեր յառաջխաղացութիւնը մեծ դասը առաւ ժողովուրդին թէ անձնագոհութեան ոգին փրկարար ուսմբացուցիչ ուժն է, եւ թէ անոնք սահմանուած են ապրելու սրտնք իրենց իտելալին համար մահ յանձն անուել գիտեն: Ժողովուրդը դասը հասկցաւ: Շարժումը պատրաստ էր արդէն անոր հոգիին մէջ, Վարդանանց արարքը կայծը եղաւ. մէկ հարուածով, ազգը ծայրէ ի ծայր բռնկեցաւ. եւ այն հոյակապ անսահման ցաւագին զիմադրութիւնը սկսաւ, զոր Եղիշէ կը նկարագրէ վսեմ էջերու մէջ: Քահանանքը նախընտրեցին զարհուրելի տանջանքներով մեծնիլ քան ուրանալ ազգային հաւատաքը. ժողովուրդը լեռներն ու անապատները քաշուեցաւ, յանձն անելով անասունի կեանք անցընել քան ասուած օտարին խոռոնուել. հալածանքը սաստկացուց Հայերուն մէջ իրենց ազգային զգացումը, հալածող տարրէն զիրենք հզօրապէս անջատեց, իրենք իրենց մէջ ամփոփեց. բերգեր ու անառիկ տեղուանք պատասպարան եղան քաջերու սրտնք երկայն զիմադրութիւններով թշնամին յոգնեցուցին, ընդհանուր աւերումին մէջ անկախութեան կղզեակներ պահեցին. եւ կիւնները շարքաշաղկեան, համբերութեան եւ անձնուիրութեան զիւցազնական ապացոյցներ տուին: Այս երկայն ու զգնդակ զիմադրութիւնը խոնջեցուցած ու վհատեցուցած էր արդէն պարսիկ բռնապետութիւնը, երբ Բիւզանդեան կայսրութիւնը, որուն հայկական պատգամաւորներ գացած էին օգնութիւն խնդրելու, Պարսկաստանին հետ սկսաւ իր մեծ պայքարը, որ վերջ ի վերջոյ ազիտաւոր պիտի ըլլար Հայաստանին, բայց որ այդ միջոցին նպաստեց պարսիկ ճնշումը մեղմացնելու: Այս բոլոր պայմանները արդէն հողը պատրաստած եւ կացութիւնը հասունցուցած էին, որով Վահան Մամիկոնեան կրցաւ իր կորովի ճարտարութիւնը ի գործ գնել եւ մարզպանութեան ձեւին տակ տեսակ մը ինքնավարութիւն հաստատել Հայաստանի մէջ: Վահանին գործը պսակումն է Վարդանին արարքին. եւ եթէ ժողովուրդը իր հիացման բաժանումին մէջ կողմնակալ է, պատմական քննութեան անաչառ հայեցումաճընն առջեւ՝ երկու հերոսները իրենց ճշմարիտ զիրքովն ու իրական համեմատութիւններովը կը ներկայանան: Առանց Վարդանին, հայ ժողովուրդը պիտի չի հասներ այն մեծաբոբոք խանդավառութեան, այն գերագոյն գոհատիրութեան, այն խելայեղ յանդուգնութեան, որոնց վրայ յենյով Վահան կրցաւ իր հնարազէտ ծրագիրը յաջողցնել. բայց անշուշտ նաեւ առանց Վահանին ճարտար ու խորազէտ քաղաքագիտութեանը, Վարդանին յա-

նէն շատ վեր, ամենէն պայծառ լոյսին մէջ, Վարդանին գեմքն է որ կը կ'անգնի, որովհետեւ Վարդան մեծնիլ սորվեցուց: Եւ, կը կրկնեմ, ժողովուրդը իրաւունք ունի: Առանց Վարդանեաններուն խիզախ շարժումին, միմիայն խորամանկութեան եւ ճարտիկ համակերպութեան վրայ հիմնուելով, շատ հաւանական է որ Հայ ժողովուրդին կորովը պիտի թուլնար, ինք իր վրայ հաւատաք պիտի նուազէր, եւ պարսկացումը, որ արդէն մասամբ սկսած էր Վարդանանց գեպքէն առաջ, պիտի ընդհանրանար: Վարդանանց արարքը թօթիկաց ազգը, զանի վերանորոգեց, պարսիկ վիթխարի զօրութեան գեմ այդ փոքրիկ խումբին անվհեր յառաջխաղացութիւնը մեծ դասը առաւ ժողովուրդին թէ անձնագոհութեան ոգին փրկարար ուսմբացուցիչ ուժն է, եւ թէ անոնք սահմանուած են ապրելու սրտնք իրենց իտելալին համար մահ յանձն անուել գիտեն: Ժողովուրդը դասը հասկցաւ: Շարժումը պատրաստ էր արդէն անոր հոգիին մէջ, Վարդանանց արարքը կայծը եղաւ. մէկ հարուածով, ազգը ծայրէ ի ծայր բռնկեցաւ. եւ այն հոյակապ անսահման ցաւագին զիմադրութիւնը սկսաւ, զոր Եղիշէ կը նկարագրէ վսեմ էջերու մէջ: Քահանանքը նախընտրեցին զարհուրելի տանջանքներով մեծնիլ քան ուրանալ ազգային հաւատաքը. ժողովուրդը լեռներն ու անապատները քաշուեցաւ, յանձն անելով անասունի կեանք անցընել քան ասուած օտարին խոռոնուել. հալածանքը սաստկացուց Հայերուն մէջ իրենց ազգային զգացումը, հալածող տարրէն զիրենք հզօրապէս անջատեց, իրենք իրենց մէջ ամփոփեց. բերգեր ու անառիկ տեղուանք պատասպարան եղան քաջերու սրտնք երկայն զիմադրութիւններով թշնամին յոգնեցուցին, ընդհանուր աւերումին մէջ անկախութեան կղզեակներ պահեցին. եւ կիւնները շարքաշաղկեան, համբերութեան եւ անձնուիրութեան զիւցազնական ապացոյցներ տուին: Այս երկայն ու զգնդակ զիմադրութիւնը խոնջեցուցած ու վհատեցուցած էր արդէն պարսիկ բռնապետութիւնը, երբ Բիւզանդեան կայսրութիւնը, որուն հայկական պատգամաւորներ գացած էին օգնութիւն խնդրելու, Պարսկաստանին հետ սկսաւ իր մեծ պայքարը, որ վերջ ի վերջոյ ազիտաւոր պիտի ըլլար Հայաստանին, բայց որ այդ միջոցին նպաստեց պարսիկ ճնշումը մեղմացնելու: Այս բոլոր պայմանները արդէն հողը պատրաստած եւ կացութիւնը հասունցուցած էին, որով Վահան Մամիկոնեան կրցաւ իր կորովի ճարտարութիւնը ի գործ գնել եւ մարզպանութեան ձեւին տակ տեսակ մը ինքնավարութիւն հաստատել Հայաստանի մէջ: Վահանին գործը պսակումն է Վարդանին արարքին. եւ եթէ ժողովուրդը իր հիացման բաժանումին մէջ կողմնակալ է, պատմական քննութեան անաչառ հայեցումաճընն առջեւ՝ երկու հերոսները իրենց ճշմարիտ զիրքովն ու իրական համեմատութիւններովը կը ներկայանան: Առանց Վարդանին, հայ ժողովուրդը պիտի չի հասներ այն մեծաբոբոք խանդավառութեան, այն գերագոյն գոհատիրութեան, այն խելայեղ յանդուգնութեան, որոնց վրայ յենյով Վահան կրցաւ իր հնարազէտ ծրագիրը յաջողցնել. բայց անշուշտ նաեւ առանց Վահանին ճարտար ու խորազէտ քաղաքագիտութեանը, Վարդանին յա-

րուցած շարժումը պիտի յանգեր ջնջումի: Երկուքը իրար  
կը լրացնեն: Եւ մեր պատմութիւնը շատ անգամ կրկնած  
է այդ երկազրուող զիւրարեւելիքները:

Այդ մեծ յիշատակներուն վրայ՝ ամէն ժամանակէ աւելի  
պատահէ է որ խորհիւնք հիմա, այս տենդոս շրջանին  
մէջ, ողբերգական գեպերէ յետոյ որոնք առանց նմանութեան  
չեն վարդանանց շրջանի գեպերուն հետ: Սարր-  
կացման, ստորնացման, անխոստովանելի համակերպու-  
թեան երկայն ժամանակամիջոցէ մը յետոյ, մատուցա-  
կան գարթումի մը մղմամբը, ազգը թօթվուեցաւ. վարդա-  
նին հոգին անցաւ անոր վրայէն, եւ ստրուկը ցատքեց իր  
թմրութենէն, ուզեց մա՛րդ գտնուիլ. բողբոջեց, իրաւունք-  
ները պահանջեց, փորձեց զիմացել, իր զոյութեան աւ-  
պացոյցը տուաւ. նոր Ղեւնդներ ծագեցան, խիզախ սե-  
րունդ մը երեւցաւ սրուն մէջ հին վարդանը կը վերկենցա-  
ղէր, եւ կիներ յայտնուեցան սրունք Եղիշէի վեմ՝ Հայ-  
ուհիներուն արժանի յաջորդներ ցուցուցին զիրենք:  
Բայց պարագաները աննպատակն էին, շարժումը կանխա-  
հատ էր, եւ ճիշդ անհամապատասխան՝ թշնամի ուժին.  
Քաղաքակիրթ աշխարհը անտարբերութեամբ պիտեց ար-  
գարութիւն պահանջող ժողովուրդի մը գալարումը. բարբա-  
րոսները անգամ մըն ալ իրենց կործանման գերը կատա-  
րեցին. խաւարչտին ձեռքեր ամբողջ ազգը կոշկոճեցին  
զմօխային ասնջարանի մը վրայ. և այսօր վիրաւոր, ոգե-  
սպառ, հիւանդ մարմին մըն է ան...

Ատենն է որ, աւերակներուն մէջէն, վահանին հոգին  
կանգնի:

Այդ հոգին անհրաժեշտ է որպէս զի ա՛յսչափ կորուսան  
ու ազէտքը պտուղ բերեն, եւ որպէս զի բոլոր այս մահե-  
րէն կեանքը գուրս ցատրէ: Արդէն, ատենէ մը ի վեր, ժո-  
ղովուրդը, իր անխաղ բնագոյականութեամբը, նոր ճամ-  
բայ մը փնտռելու հետամուտ է: Անհնարին եւ անբնական  
է վարդանեան ուղղութիւնը մշտապէս շարունակել: Աւելի  
զեղեցիկ բան չի կայ քան սանձարձակ խանդավառութիւնը,  
բան յուսահատ ու մոլեղին յանդիմութիւնը. բայց երբ  
զգացման պայթումին ետեւէն, հաշուով միտքը չի հատ-  
նիր իր գերը կատարելու, փճացում՝ յառաջ կուգայ. եւ  
ժողովուրդ մը երբեք չի կրնար փճացումը յանձն անել:  
Չնկատելով առ այժմ վերջին շարժումներուն մէջ գործուած  
կարգ մը սխալները, սրանցմէ ուսանք ոճիրի ձեւ ունին,  
մեր պարավերջին անցքերուն ամբողջութիւնը վերէն պի-  
տելով, կրնանք ըսել որ մեր պատմութեան ամենէն նշա-  
նակալից եւ ամենէն կարեւոր մէկ շրջանն էր ան. եւ ան-  
ուրանալի է որ մե՛ծ, այս՛, մեծ ու զեղեցիկ է այդ շրջանը  
իր ամբողջութեանը մէջ. մեծած կարծուած ժողովուրդ մը,  
հինգ պարսեան անշարժութենէ յետոյ՝ որու միջոցին ան-  
ճանի բռնաւորներու գարշապարին տակ ամենէն անարգ  
սարկալթեան գատապարտուած էր, կրցաւ յանկարծ, Գը-  
րականութեան բերած ցնցումէն արթնցած, Եւրոպական  
նոր գաղափարներուն շունչէն նորոգուած, Գպրոցին ծնու-  
ցած գիտակցականութեամբը ամբացած, համակերպու-  
թեան ճահիճէն ցցուիլ սաքի ելլել, արեւուն տակ իր ար-  
գար իրաւունքները պահանջել, ինքնապաշտպանութեան

շանքի մը ուրուագծովը իր անուութիւնը պայտուցանել:  
Յաւալի բան մը եղաւ որ Հայոց բարեկամները ամէն տեղ  
միմիայն մեր ազէտքներն ու շարժարանքը նկարագրեցին  
Եւրոպայի զթութիւնը հրաւիրելու համար, եւ աշխարհի  
տողեւ մեղի տակն ահար, ողորմելի, ինքզինքը պաշտպա-  
նելու անկարող ազգի մը գոյնը. քաջութեան պայտուցոյնե-  
րը, յանդիմութիւնները, զիմացութեան փորձերը մեղի  
համակրողներուն կողմէն բոլորովին անտես անուեցան  
եւ մեր թշնամիներուն կողմէն իբր խոսվարարական ոճրա-  
գործ արարքներ ներկայացուեցան: Չեմ գիտեր մեղի հա-  
մար աւելի նեղացուցիչ, աւելի նուաստացուցիչ բան մը քան  
այն տիեզերական արգահատանքը որ մեր գեղազուութեանը  
նկատմամբ արտայայտուեցաւ եւ որուն մէջ անխոստովելի  
արհամարհանք մը կը ծածկուէր: Մեր բարոյական ար-  
ժանապատուութեանը համար, կարեւոր գործ մըն է որ  
վերջին գեպերուն մէջ հայ ցեղին ցուցուցած կորովը,  
յանդիմութիւնը, զոհողութեան ոգին կրեան հանունին  
ընդհանուր սղորմ ու խղճալի պատկերին մէջէն: Այն քի-  
չերը որոնք հայկական ինդիքը մօտէն եւ ամբողջութեա-  
նը մէջ կրցան ուսումնասիրել, աւելի յարգանք ունեցան  
մեղի համար: «Անկեղծօրէն խոստովանիմ, կ'ըսէր ինձի  
օր մը Ալֆրէտ Տոսէն, թէ ձեր վերջին ցոյցերէն, եւ Ձեյ-  
թանի գեպէն առաջ, ձեր ժողովուրդը մեղի կ'երեւար  
իրբ առուստրի ժողովուրդ մը միայն. հիմա կը տեսնենք  
որ հերոսներ ալ կրնանք եղեր արտայայտել:»

Բայց այս բոլորը պատճառ մը չէ որ ազգ մը անպայ-  
ման շարունակէ վտանգին ճամբէն ընթանալ: Հերոսու-  
թիւնը, անհատին ինչպէս ժողովուրդին մէջ, ժամանակա-  
ւոր վիճակ մըն է, անձին գերագոյն ընդօստուեմն է որ մըշ-  
տական չի կրնար ըլլալ: Մշտական վիճակը, կանոնաւոր  
եւ առողջ վիճակը, զոր պէտք է ունենալ, գիտակից եւ  
ուշիմ արութիւնն է, ապահով, անվհատ եւ խոյ գնացքը  
չէլի փրկութիւն: Անոնք որ կը քարոզեն թէ պէտք է ան-  
ընդհատ ու գեռ երկայն ատեն շարունակել այս արինստ  
փորձը, անձնասպանութեան կը մղեն ազգը. եւ մեր ժո-  
ղովուրդը, որ միշտ, իր պատմութեան մէկ ծայրէն միւրը,  
խորագիտութիւնը միացուցած է քաջութեան, անշուշտ  
պիտի յանձն չանէ անիմաստ ու ամուլ զոհողութիւննե-  
րով ինքզինքը չքայնել:

Ասոնք կ'ըստու, հրատապ եւ կենսական ինդիքներ  
են, եւ պէտք ունին ընդլայնման. բայց այս ընդհանուր  
աւետութեան մէջ կացութեան մեծ գծերը միայն ուղեցի  
ցուցնել. ուրիշ առիթով թիրեւս մանրամասնութիւն այս  
նկատողութիւնները:

Քառուղիի մը մէջտեղն ենք այսօր: Ետեւնիս՝ արինս-  
ներու ճամբան մոխիրի ու մուխի մէջ կը թաղուի: Պէտք  
է փնտռել ճամբայ մը որ մեզ հանէ այս մահուան ու  
աղջամուղջի մթնալորակէն: Չգտցինք որ միս մինակ ենք  
եղեր թշնամիին հետ, եւ թէ մեր ուժը զեռ շատ խակ էր  
յողթելու համար ճնշողական տարրին: Հիմակ դադարի  
վայրկեան մըն է, անթիւ հետեւանքներով յղի, թանկագին,  
եւ խորհրդաւոր: Պէտք է զիտնանք հաշուել, գտնուիլ եւ  
ընտրել:

Առաւել քան երբեք ատենն է որ ամփոփուինք, եղած  
անսահման կորստին վրայ խորհիւնք, եւ գարմանելու մի-

ջոցները փնտոննք: Փոխանակ անիմաստ փաստակար զէ-  
ճերուն, ատեն է որ ազգին բոլոր ուժերը միանան, իրար  
հասկանան, ներդաշնակուին եւ գործեն: Իմաստակ բացա-  
զանչութիւններէն, ազէտ յոխորտանքներէն, եւ տղայական  
յոյսերէն անջատուինք. ճանչնանք մենք մեզ. մեր խնդիրը,  
մեր երկիրը, մեր ցեղը, մեր միջավայրն ու պայմանները  
ուսումնասիրենք, և գիտնանք մեր ճիգերը սեղին և ժամա-  
նակին պատշաճեցնել:

Ապրի Վարդանը: Անոր շառագոյն ստուերը պէտք է  
միշտ մեր հոգիին վերեւ ծածանի: Առանց անձնութեան  
զգացման, ազգ մը մեռած է. հերոսն է որ ժողովրդի մը  
կուտայ գերագոյն արհեստներէն: Հերոսին գործն է  
կեանքը ցնցել ու ճամբան բանալ. յետոյ, երկայն ամուր  
ներքին աշխատութիւնը պէտք է սկսի գէպի նպատակը  
յառաջխաղացութեան: Արդէն, պատմական օրէնք մըն է  
որ, մեծ յեղաշրջումի վայրկեաններէն յետոյ բնաշրջումը  
կը սկսի. այն ատեն, Հերոսը կը կերպարանափոխուի.  
Քաջին տեղ իմաստունը կուգայ. Լէոնիդասն յետոյ Սո-  
լոնը կը յայտնուի: Եւ այն ազգը մեծ է որ երկուքն ալ  
ունի: Ապրի Վարդանը. բայց ատեն է որ Վահանը երե-  
ւայ... Ես կը բազմայի որ այս տարի, Վարդանանց տօ-  
նին օրը, ամէն Հայ, Եղիշէն յետոյ, քիչ մը Փարպեցի  
կարգար:

Բարեզ, 21 փետր. 98

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

Հ Ա Յ Պ Ա Ն Դ Ո Ւ Խ Տ Ը

Մոլորաբայլ ման կուգայ հայ մը պանդուխտ  
Մարդախիտ մեծ ճամբուն վերայ բաղաբին:  
Չեղքը ծոցին վերայ՝ կարծես ընել ուխտ  
Գրուվը կոր՝ անի կ'երթայ տըխրագին:

Եւ անցորդները զուարճացած կանգ կ'առնուն.  
Ինչ նորակերպ մարդ է, կ'ըսեն զարմանօք:  
Ու ծաղրալից անոր կուտան բիւր անուն,  
Ու կը խընդան կանայք անգուլի եւ անհոգ:

Բայց կ'արտորայ արհամարհոտ լուծեամբ ան.  
Եւրոպան չար է, չ'ողորմիր ու զըթար:  
Ո՛չ կը նայի կըրպակներու ճոխութեան,  
Ո՛չ բազմութեան՝ որ կը վազէ անդադար:

Եղբայր, ո՛վ հայ եղբայր, զբտակդ գոյնըզգոյն,  
Կաշեգօտիդ՝ խըռովեցին զիս բոլոր:  
Մօտը զացի եւ ուզեցի տայ ողջոյն,  
Եւ իմանալ թէ ո՛ւր կ'երթար ան մոլոր:

Երեսս ի վեր ան նայեցաւ պիշ, ապշած,  
Կոկել սկսաւ հալաւը հին, աղքատին,  
Յետոյ փախաւ. ա՛խ մըտաւ սիրտը կասկած,  
Խորհեցաւ՝ ո՛վ կուտայ ողջոյն պանդխտին:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷԶԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գ.

1889—1891

(3)

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Պ. ՍԱՀԱԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ

Իսլամական պետութեան մէջ տիրապետող աստուա-  
ծապետական կառավարութեան սկզբունքը՝ մեզի անհրա-  
ժեշտ աշխարհական վարչութեան պէտքին հետ հաշտե-  
ցնելու համար, Սահմանադրութիւնը Քաղաքական ժո-  
ղով կոչուած աշխարհական մարմնի մը իշխանութեանը  
կնթարկած է Թիւրքիոյ Հայոց պատրիարքը: Իր երզու-  
մին հաւատարիմ սահմանադրական պատրիարք մը պար-  
տաւոր է կամ համակերպիլ Ազգային ժողովէն բղխած  
քաղաքական ուղղութեան որ երեւան կուգայ Քաղաքական  
ժողովին ընտրութեամբը, եւ կամ հրամարիլ: Երբ Ազ-  
գային ժողովը Դրան ծառայութեան մէջ գտնուող եւ ի-  
րենց անցեալովը շատ ու շատ հանրաժանութ Էֆէնտիներէ  
բաղկացած Քաղաքական ժողով մը կուտայ պատրիար-  
քին, Հայ ազգը որ ինք ընտրած է այդ Ազգային ժողովը,  
շատ իրաւունք չունի մեղադրել պատրիարք մը եթէ ա-  
նիկա կը հետեւի Երեսփոխանական մարմնին կողմէ մատ-  
նանիշ եղած ուղղութեան: Արդեօք Իզմիրլեան պատրիարք  
շատ զժողակ կացութեան մէջ պիտի չիխնա՞ր եթէ փոխա-  
նակ Քաղաքական ժողովի մը որուն մէջ ո՛չ Դրան ծա-  
ռայող, ո՛չ ալ կառավարութեան հետ առեւտրական կամ  
սեղանաւորական յարաբերութիւն ունեցող Էֆէնտի մը կը  
գտնուէր, օտուած ըլլար Նուրեան Էֆէնտիի, Ստեփան  
փաշայի եւ ասոնց նման անձնաւորութիւններէ բաղկացած  
վարչութեամբ մը որ պիտի օր մը տրուեցաւ Աշըբեան  
պատրիարքին:

Խորէն Աշըբեան եպիսկոպոսին պատրիարքութիւնը  
երեք սրոշ եւ տարբեր շրջանի կը բաժնուի, երեքն ալ  
Քաղաքական ժողովներուն ուղղութեանը համընթաց:  
Չանց ընելով այն մէկ քանի ամիսները ուր ա՛լ վերջա-  
նալու վրայ էր Մագսուտ Սիման պէյին պաշտօնավարու-  
թիւնը, առաջին շրջանը կը սկսի 1889 հոկտեմբե-  
րին երբ Թիւրքիոյ Հայոց կեդրոնական վարչութիւնը  
ստանձնեց Պ. Սահակ Ղազարոսեանի ատենապետած  
Քաղաքական ժողովը, Նորուն բոլորովին համակերպե-  
ցաւ պատրիարքը: Երկրորդ շրջանը կը բացուի 1890 ին  
ուր Աբիկ Էֆէնտի Ունճեան, մինչեւ ան ատեն Քաղա-  
քական ժողովէն մեկուսացեալ, սկսաւ գերակշիռ ազ-  
գեցութիւն ունենալ վարչութեան մէջ. փոխանցումի թը-  
ւական մը կը բացուէր: Երրորդ շրջանին սկզբնա-  
ւորութիւնը 1891ին է, որ ատեն Մագսուտ Սիման պէյ,  
Ստեփան փաշա Արուսեան եւ Դրան ծառայող Էֆէնտի-  
ներ կազմեցին նոր Քաղաքական ժողովը, ու Ազգային  
ժողովին ատենապետ ընտրուեցաւ Նուրեան Էֆէնտին:

Չօրեղ նկարագրէ զուրկ, իրար չէզոքացնող բնագոյններու եւ անհատական գաղափարներու ընդհարումին ենթարկուած, առանց բաւականաչափ մտաւոր կորույթի, Ալլաբեան խորէն եպիսկոպոս ուրիշ ո՛ր եւ է եկեղեցականէ աւելի կը կարօտէր ուղղամիտ և խելացի առաջնորդներու: Ազգային ժողովը եթէ իզմիրլեան պատրիարքին գլխուն վերեւ Նուբեան ֆաղաքական ժողով մը գետեղած ըլլար, այդ պատրիարքը, սեփական համոզումներէ կառավարուող, տեղի պիտի չի տար էֆէնտիներու պահանջումին. բայց միանգամայն իբր խղճամիտ սահմանադրական պիտի զգար թէ իրաւունք չունէր ոտնակոխել Ազգային ժողովին բղխած քաղաքական իշխանութիւնը, ուստի իրեն ուրիշ բան չէր մնար ընել բայց եթէ հրաժարականը ներկայացնել երեսփոխանական մարմինն որ կա՛մ իր ընտրած պատրիարքին իրաւունք պիտի տար, կա՛մ անոր հակառակ սկզբունքներ ունեցող բայց վարձեալ իրմէն ընտրուած ֆաղաքական ժողովին. երկուքէն մէկը կը պահէր պաշտօնի վրայ: Սակայն իզմիրլեան եպիսկոպոսը բացառութիւն կազմող զէմը մըն է, մինչ Ալլաբեանները ընդհանրութիւնն են, եւ զանոնք զեկավարելու համար է մանուանող որ ստեղծուած է քաղաքական ժողովը:

Առանց հոգեկան բարձր թոփշի, ընդհանրապէս երկշոտ բայց բոպէական յանդիմութեան գիմուզ վարդապետ մըն էր Ալլաբեան, որուն զեղացիի ժառանգական թերութիւնները ուժովցուցած էին վանական կեանքն ու կրթութիւնը: Օտար լեզուի, ֆրանսերէնի, ուսուցումը հնարաւոր ընելով մոլեռանդական զրքերու ընթերցումը, իր միաքն ալ հայ եկեղեցիին մէջ նմանը չտեսնուած տարօրինակ կրօնամոլութեամբ համակուած էր:

Այդ մտերմանդ մտքին իբր Աստուծու մարմնացումը կը պատկերանար **ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆԸ**: Քրիստոնեայ, իսլամ, հեթանոս, ինչ որ ալ ըլլայ, իշխան մը միշտ Աստուածային բղխումն է իրեն համար: Աստուած իր ամենիմաստ անօրինութեան մէջ մէկը քրիստոնեայ, միւսը իսլամ, ուրիշ մը հեթանոս իշխան ստեղծած է, բայց սրովհետեւ իշխան է ան, ուստի և աստուածային, հետեւաբար հնազանդութիւնը զերազոյն պարտականութիւն է: Երբ իրեն առջեւ հակառակ կը խօսուի Բիւզանդական կայսեր, հայածիչ Ոսկեբերանի, քրիստոնեայ պատրիարքը կը դատապարտէ Ոսկեբերանը: «Ոսկեբերանը յանցաւոր է, կ'ըսէ. վասն զի կայսրը իշխանութիւն էր, հետեւաբար իր ըրածներն ալ աստուածային. Ոսկեբերան հնազանդելու էր:» Երբ 1885ին Մակար եպիսկոպոսը կաթողիկոսական երկրորդ ընտրելի ըլլալով կաթողիկոս հռչակուեցաւ Չարէն, Թիւրքիոյ բոլոր հայ եկեղեցականները սպասեցին Ազգային ժողովին որոշումին Մակարը կաթողիկոս ճանչնալու կամ չճանչնալու համար. միայն Արմաշի վանահայր Ալլաբեան եպիսկոպոսը առանց կարեւորութիւն տալու ժողովին լճոին, փութաց իր որդիական յարգանքը մատուցանել Մակար եպիսկոպոսին, զայն կաթողիկոս ճանչնալով: «Ռուսիոյ կայսրը Մակարը կաթողիկոս հաստատած է, ուրեմն օրինաւոր կաթողիկոս է, վասն զի կայսրը Աստուծու ներկայացուցիչն է:» Երբ իրեն կ'ըսուէր թէ իբր պատրիարք ինք սատրազամէն բարձր իրաւունք

ներ կը վայելէ, եւ մենաշնորհեալ պետ մըն է, եւ անոր համեմատ շարժելու է, վասն զի սուլթանը հրամանով մը կրնայ սատրազամը պաշտօնանկ ընել, բայց պատրիարքին պաշտօնը արտօնութիւն չունի, Ալլաբեանին միտքը կ'ըմբոստանար այս ճշմարտութեան գէմ:

Ալլաբեան պատրիարքին հոգեբանութիւնը բանի մը տողով չի գծուիր. իր պաշտօնավարութեան գլխաւոր պէպքերու ամփոփումին մէջ աւելի յստակ երեւան պիտի դայ այդ վարանստ, ինքնուրոյն կամքէ զուրկ հոգին:

Պ. Սահակ Ղազար: սեանի վարչութիւնը վերջ դրաւ միապետական գրութեան օրով 1885էն ի վեր կառավարուած էր Պատրիարքարանը ֆաղաքական ժողով անունի տակ անհատներու տիրապետութեամբ: Նորընտիր ժողովը իր որոշումները կուտար մեծամասնութեան բռնովը առանց ներքին կամ արտաքին ո՛ր եւ է ճնշումի: Այդ վարչութիւնը սխալներ ըրաւ, ինչպէս պիտի տեսնենք, բայց իր ուղղամտութիւնը մնաց անկասկածելի. ու վեց տարի ետքը պատմական ծանր ժամու մը ազգը նորէն աչքերը պիտի վարձնէր այդ խումբին պատկանողներուն:

Նոր վարչութիւնը պատրաստ գտաւ իր նախորդին սրտումը Եկեղեցական ժողովի մը գումարումին համար, ամուսնական խնդիրներու օրակարգով, եւ զործապրեց զայն: Համագումարը սկսաւ նիստ ընել, ու ձեռքը երկընցսոյց վեր առնելու չորս տարուան մէջ Հայաստանի ցաւերուն վրայ տարածուած մեռելական ծածկոյթը: Եկեղեցականութեան վարիչները եղան խրիմեան, Ալէքսիան, իզմիրլեան եպիսկոպոսները. վերջինը՝ ժողովին հագին:

Համագումարը ուզեց նախ քննել Առանձնաշնորհումներու խնդիրը որուն կարեւորութիւնը կենսական է մեր ներքին զործերու ինքնավարութեան սկզբունքին համար: Կառավարութեան տրուելիք տեղեկագիրները խմբագրեց իզմիրլեան եպիսկոպոս. անոնց մէջ երեւան եկաւ ապագայ պատրիարքին կորովը: Ալլաբեան պատրիարք, ձեւական ինչ ինչ փոփոխութիւններով միայն, ընդունեց այդ ամէնը: Սն ատենը ըսուեցաւ թէ Ներսէս պատրիարքի ժամանակը իսկ այդքան բուն սճով բողոքագիր չէր ներկայացուած Դրան. ու 1895ին երբ վարչութեան մէջ զիտողութիւններ յայտնուեցան պատրաստուած տեղեկագիրներու խտալեզու պարունակութեանը նկատմամբ, գիւանատան արձանագրութիւնները ցոյց տուին թէ 1889-90ին Ալլաբեան պատրիարքին կնքած բողոքագիրները կրնային, բաղդատմամբ ատոնց, եւ նկատողութեան առնելով ժամանակներու տարբերութիւնն ալ, թերեւս ծայրայեղ համարուել:

Մինչդեռ վարչութիւն եւ ազգ Համագումարին ձեռնարկներէն կ'ակնկալէին Հայաստանի բարեկարգութիւններու խնդիրն վերաբացումը, ահա յանկարծ Մուսապէյի գործը անսպասելի կացութիւն մը ստեղծեց: Երբ իմացուեցաւ այդ ֆիւրտին վայրագութիւնը Մուշի շրջականները, հանրային զգացումը թէ՛ մեր մէջ եւ թէ՛ Եւրոպա պատկազը զայրոյթի աղաղակով: Մուսայի վերագրուած սճրագործութեանց իբր հերքում Դուռը արտօնեց աւազակին եւ անոր գէմ՝ բողոքողներուն Պոլիս փոխադրութիւնը եւ հրապարակային գատաստան:

Պիրիւնի վեհաժողովին գումարումէն ետքը տասնամեկայ շրջան մը բոլորուած էր առանց բարեկարգութեան նշանի մը Հայաստանի մէջ: Ընդհակառակը մեր գտնուածները օրէ օր կը բարգաւազէին, միշտ իրենց գէմ գտնելով Դրան հերքումները: Մուսայի գատաստանը Քիւրտի մը Հայու մը գէմ գործած ոճրին ստուգութիւնը ճշգրիտ ձեւակերպութիւնը չէր: Դատը՝ հայ ազգին եւ օսմանեան կառավարութեան միջեւ էր. գատատը՝ Եւրոպան, որ պիտի լսէր ամբաստանեալը — թրքական վարչութիւնը — Մուսայի անձին մէջ, պիտի լսէր ամբաստանողը — հայ ազգը — Մուշի գեղացիին բերնովը. ու պիտի արտասանէր երկրին իշխանութեան մեղսապարտութիւնը հաստատող «այո»ն, կամ անոր անմեղութիւնը հոչակող «ոչ»ը:

Հայութիւնը սրտի բաբախումով կը սպասէր այդ գաւառաւորութեան: Ի՞նչպէս մտքէ անցնել թէ Պատրիարքարանը առանց իրողութիւններուն ճշմարտութիւնը ստուգած ըլլալու կրնար Եւրոպայի աչքին առջեւ գատաստանի մը խիզախել: Բայց նաեւ ի՞նչպէս ենթադրել թէ Դուռն ալ առանց իրեն նպատակաւոր ելքի մը վստահութեան, համարձակութիւն սնենար ճշմարտութեան բողոքներու վերաբերեալ: Ուղբերգութեան մը հանդիպին սրատարտի անձկութեամբ սպասողի մը վիճակին մէջ էր հայ ազգը: Պատրիարքարանին անձնավստահութեանը եւ Դրան յանդուգն զիջողութեան գաղտնիքը ետքէն երեւան պիտի դար:

Երբ ծագեցաւ Մուսա պէյի խնդիրը, Ռուսիոյ գետնախառնուր իմացուց պատրիարքին թէ «Հիւստոտոսական «ազիրներէ առնուած տեղեկութիւնները կը հաստատեն «Մուսայի վերագրեալ վայրագութիւնները, հետեւաբար «Պատրիարքարանը պնդելով Մուսան Պոլիս բերել տալու «եւ գատելու պահանջումին վրայ, հզօրապէս պիտի նըստաւ Հայաստանի բարեկարգութիւններու իրազօր «ծուծին, վասն զի Եւրոպայի հանրային կարծիքը պիտի «ուզէ վերջ մը դնել վարչական այդ անտանելի դրութեան:»

Միեւնոյն ատեն միեւնոյն գետնախառնուր Դրան կը ծանուցանէր թէ «Հիւստոտոսական ազիրներէ առնուած «տեղեկութիւնները կը հերքեն Մուսայի վերագրեալ վայրագութիւնները, հետեւաբար Դուռը ընդունելով Մուսան Պոլիս բերելու եւ գատելու առաջարկը, մահացու «հարուած պիտի տայ հայկական ինչորին, վասն զի Եւրոպայի հանրային կարծիքը պիտի համոզուի թէ ս'րքան «անհիմն են Հայերուն տարածած ամբաստանութիւնները:»

Այս ծանր պարագային Պատրիարքարանը իր պարտականութիւնը խզմտօրէն կատարեց, եղիւթութիւնները ստուգելէ յետոյ զանոնք աշխարհի աչքին առջեւ պարզելու միջոցները նախահոգակ պատրաստութեամբ ապահովելով: Մուսային զոհերը եւ անոնց վիանները խեղճօղի դիւղացիներ էին. երկիւղը մեծ էր թէ կառավարութիւնը ուզածը այդ թշուառներուն ըսել պիտի տայ: Դատարանին նախադահը այդ հարցաքննութիւնները վարեց արտակարգ ճարտարութեամբ, խղիւղու համար եղեռնաւորին աննպատակ ո՛ր եւ է յայտարարութիւն. ընդհանուր գատակազը ոճրագործին ակներեւ պաշտպանը հանդիսացաւ. եւ սակայն Հայաստանի բազմադարեան շարժարաններուն բողոքները դուրս թռան այդ գեղջկական հիւժեւաբերաններէն, սարսուղագեցիկ սպաւորութիւն մը ստեղծե-

լով: Ամբաստանութիւններուն մէկ մասին համար Մուսան անպարտ հոչակուեցաւ, բայց խայտառակուած կառավարութիւնը այլ եւս չթողարեց գաւառի շարունակութիւնը. Մուսան հեռացուցին Պոլիսէն:

Այս գատաստանը մեծապէս նպաստեց հայկական ինչորին. ոչ միայն անգամ մը եւս հաստատուեցաւ Հայաստանի հարստահարութիւններուն ճշմարտութիւնը, այլ նաեւ վայրագ աւագակի մը համար գատական իշխանութեան անպատկառ կողմնակալութիւնը նոյն խակ մայրաքաղաքին մէջ, գետնախառն մարմինն ու եւրոպական մատուցին ներկայացուցիչներուն աչքին տակ, անժխտելի նոր ապացոյց մը եղաւ Դրան կողմէ հարստահարիչներուն եւ մարդասպաններուն ընձեռուած քաջաբերական պաշտպանութեանը:

Այս գատական ինչորին ծագած ատեն, Դրան բարեկամները յայտարարեցին թէ անոր էլքը ի՞նչ ալ ըլլար, պիտի ծառայէր թրքական վարչութեան վարիչ Եւրոպայի հանրային կարծիքին առջեւ բարձրացնելու: Մուսային վերագրուած բարբարոսութիւններուն հերքումը ծանր հարուած պիտի տար հայկական ինչորին. հաստատութիւնը՝ սրուն պիտի հետեւէր օրինական պատիժ, ապացուցանելով օսմանեան իշխանութեան արդարատիրութիւնը, զինաթափ պիտի ընէր հակառակախօսները, ու ի նպատակ բրիտաններուն եւրոպական միջամտութեան պէտքը պիտի տկարացնէր:

Եւ արդարեւ ալ արդարացաւ գատաստան մը կրնար խորապէս փսխել հայկական ինչորին ընայթը: Բայց օսմանեան իշխանութիւնը եթէ երկրին փրկութեան առաջին պայմանը Արդարութեան մէջ փնտռելու մարքի ընդարձակութեան հատած ըլլար, ամբողջ Թիւրքիոյ վիճակը հիփոսիլին կը փոխուէր: Այն օրը որ Թիւրքիոյ խաւով համոզուի թէ այլ եւս թող պիտի չի սրուի անպատիժ հարստահարել եւ սպաննել բրիտաններն, այն օրը բարեկարգութեան ինչորին արդէն մեծ մասամբ լուծուած կ'ըլլայ: Արդարութեան սկզբունքը ընդունելու համար թրքական կառավարութիւնը պէտք է հրաժարի բրիտաններուն վրայ խաւովին զերիշխանութիւնը անխախտ պահելու սկզբունքին: Արդարութեան թուականը Հաւատարմութեան թուականը կը բանայ. եւ խաւով գուցէ այնքան չի խրոչիր բրիտաններն սաստիկապէս զանալու վախէն սրբան կը սարսուփի Հաւատարմութեան հեռագատակերէն:

Դատը իր բոլոր պարագաներովը շատ տիրեցուց ազգին տառապանքներուն պարմանը սուլթանէն ինչորելու քաղաքականութիւնը պաշտպանող Հայերը: Պատրիարքարանը երկրին օրէնքներուն միջոցաւ հայ ժողովրդին կացութիւնը բարեփոխել փափաքած էր առանց արտաքին աջակցութեան. էն թրքականը անգամ կը վարանէր վարչութեան այս ընթացքը քննադատելու. եւ սակայն գատաստանին կողմնակալութիւնը իրաւունք կուտար անոնց որ կը պնդէին թէ թրքական իշխանութիւնը իր ազատ կամբովը բրիտաններուն ս' եւ է նպատակաւոր անօրինութիւն չընէր:

Դիւանագիտական յաջողութիւն մը նաեւ Ռուսիոյ արեւելեան քաղաքականութեան համար այս գատը, որ թրքական վարչութեան քայքայուած վարիչին նոր հարուած մըն ալ կուտար. ու հայ ժողովուրդը իր վիճակին բարեւոքումը այլ եւս չ'ը կրնար խաղաղատիրական միջոցներէ յուսալ:

\* \*

Մուսայի խնդրին փակումէն ետքը զգածեալ լըջու թեամբ համակեցաւ հայ ժողովուրդը. զգաց թէ այդ գասար ազգային կեանքը յեղաշրջելու կոչուած էր. տարակոյտի հետք մը չէր մնացած թէ երկրին իշխանութեան հրամանովն ու աջակցութեամբը կը կատարուէին հարստահարութիւնները. միանգամայն տեսնուեցաւ որ օսմանեան կառավարութիւնը Եւրոպայէն ո՛չ կը վախնայ ո՛չ ալ կ'ամշնայ. նաեւ, Մուսայի գործին առթիւ Եւրոպա Դուռը դատապարտեց, բայց միայն բարոյապէս, առանց ո՛ր եւ է գործնական միջոցի Հայոց վիճակին բարեփոխութեանը համար: Հայ ազգը կը գտնուէր սերմն ոտոշ կացութեան մը հանդէպ. մէկ կողմէն թրքական թշնամութիւնը, միւս կողմէն Եւրոպայի անտարբերութիւնը. ազգին կը մնար կա՛մ ճաշկատազրին անձնատուր ըլլալ, կա՛մ կռուիլ ապրելու համար: Եւրոպայացիները կռուին արուեստ, ուստի եւ ինքնապաշտպանութեան գաղափարը որ շատնայ ծընունդ առած էր ոխաւ գործնալ ու հայ աշխարհին ամէն կողմը, հայ ժողովրդին ամէն խաւերուն մէջ թափանցել: Կանոնաւոր կազմակերպութեան պէտքը զգացուեցաւ, խումբեր սկսան կազմուիլ, յարաբերութիւններ հաստատուիլ: Պոլսոյ եւ Երկրին միջեւ անընդհատ շարժում:

Եւրոպայի հայերուն գործունէութիւնը հեռուէն կը բարբոքէր երկրին երիտասարդութեան ետանդը, վառ կը պահէր անոր հաւատքը: Հիմա նոր թերթեր հիմնուած էին. «Արմէնիա» թիւ 1 «Հնչակ» թիւ 2 «Հայաստան» թիւ 3. Լինստան կը հրատարակուէր ֆրանսերէն եւ անգլիերէն «Արմէնի»-ն: Հայ ժողովրդին մէջ հաւատք կը տարածուէր թէ յեղափոխական շարժումը պիտի կրնար գործոցնել Եւրոպա աշխատող Հայերուն ձեռքը, եւ արդիւնաւոր միջամտութիւն մը հնարաւոր ընծայելու միջոցները անոնց գիւրացնել: Կ. Պոլսոյ մէջ ժողովրդական վարչութեան մը եւ «սուրբ եռանդով» բարբոքուած Համագումար եկեղեցական ժողովի մը գործունէութիւնը հզօրապէս կը գրգռէր ժողովրդին միտքը: Սիրոյ եւ միաբանութեան ոգին կը ախրապետէր, հանրային վտանգը մոռցնել տալով ամէն անձնական նկատում:

Հայ ժողովրդին այս հոգեկան արածապրութեան պահուն էր որ Պոլիս եկան բանի մը Ժընէվեան Կովկասցիներ, որոնք յարաբերութեան մտնելով տեղական խումբերու, օրագրողներու, ազգային գործերու հետամուտ եւ զոյգներու հետ, ջանացին ամենքը կապել Տրապիզոն կազմուած Կեղրոնի մը: Մտքերը պատրաստուած գտնելով զժողովրդին շիրեցին իրենց խորհուրդներուն իրագործումին համար: Եւ «Հնչակ»ի ներկայացուցիչը, «Հայաստան»ի աշխատակիցը, «Արմէնի»ի թղթակիցը իրարու քով, ձեռք ձեռքի սուած կ'աշխատէին: Մէկ թըշնամիին դէմ մէկ բանակ:

Կ. Պոլսոյ մէջ երեք գլխաւոր խումբ կար: Ասոնցմէ մէկը՝ հեռուները նկրտող ծրագրով ու խելահաս, ազգասէր անձնաւորութիւններու վարչութեան տակ, անձուկ շրջանակի մը միայն ծանօթ կը մնար: Անմիջական գործունէութեան չմասնակցեցաւ: Իր քայքայումը ազգին մեծ դժբաղդութիւններէն մէկը եղաւ: Անոր յիշատակութիւնը ընկելու համար դեռ շատ կանուխ է: Կ'անցնիմ միւս խումբ

բերուն որոնք գործերու ընթացքին վրայ ազդեցին: Մէկը կը ներկայացնէր գլխաւորապէս «գործողները», միւրը՝ «խորհուրդները»: Այս վերջիններս կը ճանչցուէին «խորհրդական մարմին» անունով, եւ իրենց խորհուրդներուն հետ մէկտեղ նաեւ գործին գրամը կը հայթայթէին: Երկու մարմիններու անգամները իրարու անծանօթ կը մնային. իրենց միջեւ յարաբերութիւններու միջնորդը Ժընէվեաններէն Պ. Ք... էր:

Պոլսեցի եւ երկրացի խումբերուն նպատակն էր համբերութեամբ աշխատիլ, առանց աճապարելու, եւ գործողութիւնը ապահովեալ ծրագրով մը ազգային ինքնապաշտպանութիւնը պատրաստել. բայց յանկարծ Հայաստանէն ջարդի մը գուժը տակնուվրայ ըրաւ ամէն խորհուրդ: Էրզրում եկեղեցիին կից գերեզմանատան մէջ 1890 յունիս 6ին 120 անգէն Հայ ջարդուեր էին թիրք գինուարներէն: Այս լուրին աղաւթութիւնը ահեղ եղաւ. խաղաղութեան տան հաւաքական կատարածի վրայ գաղափար չունէր ժամանակակից հայ սերունդը: Հայութիւնը սարսուռաց, ամէն հայ մտածեց թէ Մուսա պէյին գասար խաղաղութեան քաջաշերանք եղած էր ուղածնուն պէս Հայերը կտարաւելու. Կ. Պոլսոյ Հայերը մանաւանդ վախցան թէ այս կատարածին հանդէպ ազգային համակերպութիւնը կրնայ աւելի ազիտաբեր հետեւանքներու յանդիլ:

Յեղափոխական կազմակերպութիւնները սակայն գործնական վրդովումի պէտքը զգալով հանգերձ լաւազոյն կը համարէին շարժումը Պատրիարքարանէն տանել. դեռ նոր ամբանալու վրայ եղող մարմին մը որ սուրգայի ծրագիրներ կ'ուրուագէր, մէկէն ի մէկ կտառափարկան ուշադրութիւնը իր վրայ հրաւիրած պարագային կը վտանգէր իր ձեռնկերպութիւնը: Պատրիարքական միջամտութիւնը բարեբաղդաբար չուշացաւ. Աշրգեան Խորէն պատրիարք Երլարզի պաշտարը երթալով սուլթանին առաջին քարաուղար Սիւրէյա փաշային հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ.

— Էրզրումի գերեզմանատան մէջ գինուարներէն ջարդուող Հայերը անգէն էին. անոնց զիակները պրպակելով զմիկ մը անգամ վրանսուն չելաւ. Թնչ իրաւունքով զօրքը կրակ կ'ընէ ժողովրդին վրայ երբ իր վարաւոր ուսանողութիւններուն համեմատ իր գերեզմանատան մէջ կը գթօնու: Այնչն՛ու կը վարձանաք երբ սահմանազիտի Հայերը սուտասէր են. անգին ատանկ բան չի պատահիր: Իմ ժողովուրդս աչքերը Ռուսիոյ կը յաւէ, եւ ես բան մը չեմ կրնար ըսել:

Պատրիարքը այս յայտարարութիւնը ընելէ յետոյ մեկնեցաւ, ծանուցանելով որ զրաւոր հրաժարականը պիտի խրկէ:

Կեղրոնական վարչութեան, Համագումար ժողովին ու Պատրիարքին համերաշխ ուղղութիւնը յուզեց Էֆէնալիններու գաստակարգը, Պատրիարքարանէն գրեթէ արտաքսուած 1889ին: Ղալաթիա Մէհմէտ Ալի-փաշա խանը գումարուելով ասոնք սրտեցին իրենց ազդեցութեամբը չէզոքացնել Պատրիարքին ու վարչութեան «անքաղաքագէտ ու բոլորմաններուն հետեւանքները:» Պատրիարքական հրաժարականը հիմնուած էր Էրզրումի ջարդին վրայ. շատ պարզ պատճառաբանութիւն.

—Սրբազան, ի՞նչ կ'ընես, ըսին էֆէնտինները. միայն մէկ դէպքէ համար հրաժարելով շնջած կ'ըլլաս բոլոր միւս թաքրիրներուն կարեւորութիւնը: Առանձնաշնորհումներու խնդիր, Մուսա պէյի խնդիր, հարստահարութիւններու խնդիր, ասոնք կարեւոր չեն: Եթէ պիտի հրաժարիս՝ այս ամէնուն գործանքը պահանջելով քաշուէ, եւ ոչ թէ լակ քանի մը հոգիի սպաննութեան պատրուակովը. մեռնելը ետ չեն գտնար բայց հարստահարութիւնները կրնան վերջ գտնել, ու առանձնաշնորհումները անխափան շարունակուիլ: Ասոնց վրայ պնդեցէք, սրբազան հայր, ասոնց վրայ:

Էֆէնտինները իրենց ազգեցութեամբն ու պերճախօսութեամբը թակարարը ձգեցին պատրիարք և վարչութիւն. հրաժարագիրը խմբագրուեցաւ երկարաձիգ պատճառաբանութիւններով խճողեալ: Ի՞նչ մէկ—Ալի փաշա խանին ծրարագիրը մէկէմէկ շլացուցիչ համարուեցաւ, բայց անոր ներքինը պարզապէս օգնութիւն էր նեղը մնացող կառավարութեան:

Հայոց պատրիարքը հրաժարելով պարզ, ստոյգ իրավութեան մը համար, սրպիսին էր Էրզրումի ջարդը, կըտրուկ պատասխանի մը հարկը անխուսափելի կ'ընծայէր. այդ պատասխանը՝ յանցաւորին պատիժ, ապագային ապահովութիւն պիտի ըլլար: Կառավարութիւնը ո՛չ մէկը կրնար գործադրել ո՛չ միւսը երաշխաւորել, ուստի եւ բողոքարկու պատրիարքն ալ կը մնար հրաժարեալ: Գանդատներու բազմապիսութիւնը սակայն անհրաժեշտ պիտի ընծայէր յատուկ յանձնաժողովի մը միջոցաւ մանրամասն քննութեան մը պէտքը, հանդերձ պատրիարքին պաշտօնավարութեան շարունակութեամբը, «միակ միջոց յաջողութեամբ պսակելու համար կառավարական ջանքերը «Հայոց կացութեան բարւոքումին նպատակով»: Մինչ այս մինչ այն, ժամանակը Էրզրումի կոտորածը պատմական հին դէպքերու կարգը կը տեղաւորէր: Էֆէնտիններու կամքին համաձայն խմբագրուեցաւ հրաժարագիրը որուն մէջ միայն եւ միմիայն անձնական ատելութեան յագուրդ տալու սահմանուած բողոքի մը ներմուծումը կըրնամ ըսել թէ ազգային դժբաղդութեան պատճառ եղաւ:

«Ալի էֆէնտի»ի վերածեալ Շահպաղ Կարապետ էֆէնտիին սուլթանը Պալայի աստիճան տուած ըլլալով, թըրքական այս «բարձրացումը» մոլեգնութեան մղեց անոր քրիստոնեայ հայ թշնամիները, եւ ասոնց պարագլուխը, Նուրեան էֆէնտին. ասոնք յաջողեցան պատրիարքական հրաժարագրին մէջ սպրդեցնել «ազգային բողոք» մը ընդդէմ «հաւատուրացի մը պատիւներու արժանացումին»: Սուլթանին քարտուղար Սիւրէյա փաշա պատրիարքին ձեռքէն ստացաւ բողոքագիր—հրաժարականը. ուշադրութեամբ կարդալէ յետոյ պատրիարքին երեսը նետեց զայն, բարկացաւ գոչելով.

—Ի՞նչ, նորին վեհափառութիւնը Հայոց պատրիարքէն պէտք է արածնութիւն ստանայ իր ծառաները վարձարելու համար: Դուք կը մոռնաք որ քրիստոնէութիւնը այս պետութեան մէջ թոյլատրեալ կրօնք է միայն, իսկ տէրութեան կրօնքը իսլամութիւնն է, եւ նորին վեհափառութիւն սուլթանը խալիֆն է և իսլամութիւն ընդունողն:

րուն պաշտպանը: Այսպիսի գրութիւն մը կարող չեմ' ուրիւն վեհափառութեան ներկայացնել:

Շուարած, այլայլած, պատրիարքը գուրս կ'ելլէր ամօթահար, գլուխը կախ:

Պոլիս անմիջապէս տարածուեցաւ պատրիարքին Երւտըղէն «վնասուած» ըլլալուն լուրը, ասոնց պատճառին յայտնութեանը: Ազգային ժողովին նստին, որ այն օրը պատահեցաւ, եկեղեցականները, մանաւանդ պատրիարքական աթոռին ակնկալույց եղողները, կը պոսային տաճարին բակը, սանդուղներուն վրայ.

—Ժողովուրդ, իմացէ՛ք, Պատրիարքը վնասուե՛ր է. ալ ի՞նչ յոյս կը մնայ:

Կ'ընթանար չարաշուկ համբարը, «Պատրիարքը վնասուե՛ր է». կ'երթար թունդ հանել բեռնակիրները, տըրքեցնել կիներ, զայրացնել վաճառականը, ցնցել շուկան, հրահրել գրագէտը, զրդուկ արհեստաւորը: «Պատրիարքը վնասուե՛ր է», վաւերացու՛մ Մուսայի դատին, քաջախրա՛նք Էրզրումի ջարդին. ահա ի՞նչ կը զգար ժողովուրդը: Ո՛ր կանգ պիտի առնէր ազգային տագնապը: Տիրող յուզումը մեծ էր. յեղափոխական կազմակերպութիւնը շարժումը վարելու պէտքը զգաց: «Խորհրդական» և «գործող» մարմինները առանձինն առանձինն գումարումներու մէջ կը խորհէին կացութեան դարմաններուն վրայ. ժընկեան պատուիրակները կը փաստաբանէին մեծ ցոյցի մը օգտակարութիւնը. երկու խումբերն ալ կը մնային վարանոտ, հետեւանքներուն ծանրութեան նախազգացումովը:

Ժընկեան Պ. Ք... խորհրդական մարմին պարզեց գործելու ծրագիր մը որ ապշութիւն պատճառեց: Յիմարութեան յլացում մը, որ մաքի միենոյն ուղղութեամբ, ու միենոյն դասակարգի պատկանողներէն պիտի գործադրուէր եօթը տարի ետքը, բոլոր այն աղիտաբեր հետեւանքներովը որոնց գուշակութեանը համար մեծ խելքի մը պէտք չի կար:

Կ. Պոլսոյ եւրոպական հաստատութիւններուն վրայ յարձակու՛մ, ահա ինչ որ 1890ին ալ մտաբերած էին ժընկեցիները, հայկական խնդրին նպաստաւոր լուծումի մը համար: Պ. Ք... կ'առաջարկէր Ռուսիոյ եւ Անգլիոյ դեսպանատներուն քարկոծումը հայ ժողովրդին կողմէն, «անկցի՛ Չարը, անկցի՛ թագուհին» աղաղակներու ընկերակցութեամբ: Խորհրդական մարմինը երեք նիստ ըրաւ այս առաջարկին դէմ կուսելու համար: Տարակոյս չի կար թէ այդ աննպատակ ծրագրին գործադրութեամբ, թիւրք կառավարութիւնը Հայերը խոշտանգելու անսահման իշխանութիւն պիտի ստանար Եւրոպայէն: Դուրը, առիթէն օգտուելով, պիտի յայտարարէր դեպպանատներուն թէ ասոնց Հայերը խստիւ պատժելու ինք անկարող է պաշտպանել թիւրքիոյ Եւրոպացիները ու անոնց շահերը: Ու գիտենք այսպիսի պարագաներու մէջ Եւրոպացիին վայրագութեան աստիճանի հասնող խոտութիւնը: Եւրոպայէն վախը հազիւ թէ քիչ մը կը չափաւորէ — կամ կը չափաւորէր— թրքական վայրենութիւնը. ինչ զարհուրելի դժբախտութեան պիտի մատնուէր հայ ժողովուրդը երբ զինքը պատուհասելու անսահման արածնութիւն շնորհուէր թիւրքին Եւրոպայէն: Երկարատեւ վիճարանութիւններէ յետոյ այդ մահաբեր ծրագրին գործադրութիւնը բացարձակապէս

արգիլուեցաւ: Կսկիացիները թիւրքիոյ հայ ժողովրդին եւ Հայկական դատին սաստկապէս վնասած են երբ թիւրքիոյ հայերուն ուղղութենէն ազատ մնալով ինքնազուտս գործողներ, անկախ վարչներ եղած են: Ինը տարուան յեղափոխական պատմութիւնը այս ճշմարտութիւնը կը հաստատէ:

Դեռ պատմաբանները քարկոծումն առաջարկը մերժուելէ յետոյ պատրիարքին պէմ ցոյցի մը գաղափարն ալ անընդունելի նկատուեցաւ: Աշրքեան պատրիարք այն ատեն նը սահմանադրական պաշտօնէի մը պարտականութիւնը պէս սահմանիչը չէր ըրած: Մուսայի դատին մէջ վարչութեան հետ մէկտեղ պաշտպանելով հայ ժողովրդին շահերը, առանձնաշնորհութեան ինքրին համար կեղեցական ժողովին բողոքները սպառնալով, Էրզրումի ջարդին պէմ պալատը ազգապէս խօսելով, պատրիարքը ազգին արժէ գոհութեան ո՛ր եւ է առիթ չէր կրնար հայթայթած ըլլալ: Նոյն իսկ հրատարակելի փոփոխութիւնները, թէեւ դաւի մը հետեանք, բայց եւ այնպէս իրենց ամբողջութեամբը Դրան աննպատակ: Այսպիսի հանգամանքներու մէջ պատրիարքին հակառակ ո՛ր եւ է ցոյց պիտի կրնար անոր վարչութեան ընթացքին իբր գատապարտութիւնը նկատուիլ. եւ որովհետեւ այդ ընթացքը հակակառավարական եղած էր ուստի եւ Դուռը պիտի կրնար Եւրոպայի յայտարարել թէ Հայոց պատրիարքին Դրան նկատմամբ հետեւած թըշնամակայն ուղղութիւնը Կ. Պոլսոյ Հայերուն տագնաութիւնը պատճառած ըլլալով անոնք պատրիարքին հրատարականը կը պահանջեն: Այս անհերքելի տրամաբանութիւնը հակապատրիարքական ցոյցի առաջարկը ոչնչացուց:

Եւ սակայն ժողովուրդը կը մնար տակնուրայ. բան մը պէտք էր. խորհրդական մարմինը ամէն նկատուեանքը հաշտեցնող երկու կարգադրութիւն մտաբերեց: Պատրիարքին առաջնորդութեամբ Դրան խաղաղ բայց հանդիսատար դիմում մը նպատակայարմար երեւցաւ: Պ. Ք. գործող մարմինն կողմէն ընդունեց այս առաջարկը, որուն գործադրութեան մանրամասնութիւնները ինք պիտի կարգադրէր գործող մարմինն հետ: Կառավարութեան տրուելիք բողոքագիրը խմբագրուելով յանձնուեցաւ Պ. Մ. Ք. Բայց այս կարգադրութիւնը իսկ ենթարկուեցաւ ուրիշ պայմանի մը. ցոյցը որքան որ ալ խաղաղասիրական հանգամանք ունենար բայց եւ այնպէս ղեպուածը կրնար յեղաշրջել ամէն խորհուրդ, քանի որ անկարելի է ղինուորական կարգադրութեամբ վարել ժողովուրդը: Ու մանաւանդ ապագայ գործունէութեան շատ ֆեստակար կը համարուէր Կ. Պոլսոյ մէջ յեղափոխական կազմակերպութեան մը կանխահաս կասկածը կառավարութեան ներշնչել: Ուրեմն եթէ հնարաւոր էր առանց ցոյցի հասնիլ բաղձացեալ նպատակին, նախ այդ միջոցը փորձել: Պ. Ք. համաձայնեցաւ այս առաջարկին: Տնօրինութիւնը հետեւեալը եղաւ.

Կեդրոնական վարչութեան գիմելով պարզել ազգին հոգեկան վիճակը, ցոյց տալ ժողովրդական յուզումն վրտանգները, եւ ամէն շարիքի իբր դարման խնդրել պատրիարքին անմիջական հրատարականը, Էրզրումի ջարդին

վրայ հիմնուած: Աշրքեան պատրիարք եթէ յանձնառու ըլլար այս պայմանին, հայ ժողովուրդը, նախաձեռնութեամբ Յեղափոխական կազմակերպութեան, յուլիս 15ի կիրակի օրը պիտի երթար Մաքրի-բէօյ եւ պիտի պահանջէր պատրիարքէն չհրատարակ պաշտօնէ՝ «Կեցցէ Խորէն պատրիարք, ժողովուրդը ուրիշ պատրիարք չի ճանչնար» գոչելով: Իսկ պատրիարքը կանխաւ համաձայնութեան մը համեմատ պիտի յայտարարէր.

— Սիրելի ժողովուրդս, Բնչպէս կրնամ պատրիարքութիւն ընել. ո՛չ թնականթ ունիմ, ո՛չ հրացան, ու Հայաստան կը ջարդուի. կը բողոքեմ, մտիկ ընող չի կայ. ուստի քիմ անկարողութեանս մէջ ինձի ուրիշ բան չի մնար ընել, բայց եթէ հրատարակ:

Ժողովուրդը պիտի մնար անսասան, հանրային զգացումը օրէ օր աւելի պիտի յուզուէր. բնականաբար սուլութեանը չէր կրնար այդպիսի սլարագանները մէջ արուած հրատարական մը ընդունիլ. բայց պատրիարքն ալ իր որոշումին վրայ հաստատ մնալով, կացութիւնը շատ կը կնճռոտէր: Հայոց կողմէ խաղաղ, եթէ ներքի է ըսել՝ սնդագլուխ յամառութիւն մը կրնար բաւական դժուար կացութեան մէջ ձգել սուլութեանը որով հարկադրուէր գտնել կարգ մը տնօրինութիւններ ընել պատրիարքն ու հայ ազգը հանդարտեցնելու համար:

Այս կարգադրութիւնները տեղի ունեցան յուլիս 9ին, երեքշաբթի, Բերա. միւս օր պատրիարքը Երլաբզ պիտի երթար Սիրէյա փաշային յանձնելու սրբազրուած հրատարակիչը, Շահպաղի ինդիրը մէջէն վերցնելով: Խորհրդական մարմինն անգամներէն մէկը պաշտօն ստացաւ յաջող առտուն բանակցել Ազգային վարչութեան ատենակազմին հետ որպէս զի պատրիարքը հրատարականը վերջնապէս տայ առանց պայմանաժամ ընդունելու: Պատուիրակը յուլիս 10ի երեքշաբթի առտուն Ղալաթիոյ ազգային խորհրդարանը երթալով գտաւ վարչութեան ատենակազմ Պ. Մահակ Ղազարոսեանը, եւ յետոյ պատրիարքը: Ազգային պաշտօնական իշխանութեան եւ յեղափոխական կազմակերպութեան այս առաջին հանդիպումը, որ կրնար մեծապէս նպաստել համերաշխ գործունէութեան համար ազգային միակ ծրագրի մը պատրաստութեանը եւ գործունէութեանը, անօգուտ չեմ սեպել նկարագրել:

Պ. Մահակ Ղազարոսեան սոստուան ժամը 2 ուկէսին (Ը. թ.) միայնակ պատրիարքին կը սուսեր Ազգային ժողովի սրահին կից սենեակին մէջ ուր վարչութեան նիստերը տեղի կ'ունենան: Պատուիրակը ժողովրդին յուզումը, հողեկան կացութիւնը պարզելէ յետոյ խօսակցութիւնը կը շարունակուէր հետեւեալ կերպով.

— Սահակ էֆէնտի, Սրբազանը այսօր պալատ պիտի երթայ. հրատարականը վերջնական պիտի ըլլայ:

— Չենք գիտեր. տեսնենք գործերը Բնչ կերպարանք կ'անեն:

— Աղէկ կ'ըլլայ որ բողոքագիր-հրատարականը տայ եւ վերադառնայ, առանց հրատարականը յետաձգելու ո՛ր եւ է պայմանաժամով:

— Ա՛լ տեսնենք:

— Սակայն լաւ կ'ընէք որ նկատողութեան անուէք ժո.



ՖՐԱՆՍԱՑԻ ՈՒՂԵՒՈՐ ՄԸ ԷՋՄԻԱՄԵՆԻ ՎԱՆՔԸ

ՏԱՄԵԼԵԹԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ

Ժան-Պաղիսյ թափառիկ ֆրանսացի ծանօթ ուղեոր մըն է որ, տասնըօթներորդ դարուն, քառասուն տարի ճամբորդած է Արեւելք, վեց անգամ այցելելով Թիւրքիա, Պարսկաստան ու Հնդկաստան: 1679ին Բարիզ հրատարակած երկու ընդարձակ հատորի մէջ նկարագրած է իր այս ճամբորդութիւնները, այցելած երկիրներուն բարքերուն, կրօնքին, կառավարութեան, արհեստներուն ու վաճառականութեան վրայ շատ շահեկան ծանօթութիւններով: Ոճը թոյլ է, յաճախ կրկնութիւններով ու աւելորդ մանրամասնութիւններով ծանրաբեռնուած, բայց մասնաւոր ջանք մը ունեցած է միշտ ճշգրիտ ըլլալու իր պատմութեան մէջ, այնպէս որ իր գործը շատ կարեւոր սուղարան մըն է տասնըօթներորդ դարուն Թիւրքիոյ, Պարսկաստանի եւ Հնդկաստանի կացութեան մասին:

Թափառիկ, որ ֆրանսական ճարտարութեան նոր հըրապարակներ գտնելու հետամուտ եղած է, այդ երեք երկիրներուն մէջ ալ միշտ Հայերու հետ գործ ունեցած է, յաճախ ճամբորդելով հայ վաճառականներու կարաւաններուն հետ: Յարգանքով ու հիացումով կը խօսի միշտ մեր ցեղին վրայ, մասնաւոր ընկելով մասնաւորապէս հայ ցեղին իր ինքնութիւնը պահելու կորովը՝ ամէն բնութեանց հակառակ:

1665ին է որ մասնաւորապէս այցելած է Էջմիածին, ու մանրամասնօրէն նկարագրած այդ այցելութիւնը: Ահաւասիկ այդ էջը իր ամբողջութեամբ: Լ. Չ.

Հայաստանէն Պարսկաստան մտած ատենդ՝ ուշադրութեան արժանի առաջին տեղն է Երեւելքի երկրէն, երեւանէն երեք մղոն հեռու: Ասոնք երեք վանք են իրարմէ քիչ շատ հեռու: Ամենէն մեծը եւ ամենէն գեղեցիկը բնակավայրն է հայոց Մեծ Պատրիարքին. ուրիշ մը կայ հարաւային կողմը, որ առաջինէն մէկ հրացանի գնտակի հեռաւորութիւն ունի, ու երրորդ մը անկից գեղեցիկ արեւելք մէկ քառորդ մղոն, որ կուսաստան մըն է: Հայերը այս տեղը կ'անուանեն Էջմիածին, այսինքն Միւսիկ որդի, որ գլխաւոր եկեղեցիին անունն է: Իրենց Բրոնիկներուն մէջ կը պատմուի թէ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ գալուստէն երեք հարիւր տարի ետքը՝ ձեռնարկեցին անոր շինութեան եւ թէ պատերը արդէն կը թնկուէր չափ բարձրացած էին, Սասանան գիշերը կուգար արեւ ցերեկին շինուածը. ասիկա երկու տարի տեւեց. բայց գիշեր մը ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ երեւցաւ, ու այդ վայրկեանէն Սասանան ա'լ չկրցաւ արգիլել Եկեղեցիին աւարտումը: Եկեղեցին նուիրուեցաւ սուրբ Գրիգորի որուն համար Հայերը մեծ յարգանք ունին, ու հոն կը տեսնուի քարէ սեղան մը, որ, նոյն ֆրոնտիկներուն համաձայն, այն քարն է որ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ կ'իջնէր երբոր սուրբ Գրիգորի կ'երեւնար: Եկեղեցին մտնողները կ'երթան այդ սեղանը կը համբուրեն մեծ բարեպաշտութեամբ:

Երկրորդ վանքը կառուցուած է ի պատիւ բամբիշի մը

որ քառասուն ազնուական կոյսերով Իտալիայէն եկաւ սուրբ Գրիգորը անսնելու: Հայաստանի թագաւոր մը օձերով լեցուն վիրապի մը մէջ նետել տուած էր սուրբը, որ սակայն ո եւ է վնաս չկրեց: Մեծ հրաշքով մը՝ հոն ապրեցաւ տասնըչորս տարի, ու այդ թուականէն ի վեր շրջակայքի օձերը, երկու երեք մղոն հեռաւորութեամբ տեղ, բոլորովին անվնաս են: Այդ կռապաշտ թագաւորը ուզած էր վայելել իշխանուհին, որ շատ գեղանի էր, ու անոր ընկերուհիները. ասոնք իրենց առաքինութեամբ կըրցան գիժաղբի իրենց եղած բնութեան, ու թագաւորը, զիտաւորութեանը մէջ չյաջողելէն կատղած, ամենքն ալ մեռցնել տուաւ: Ահաւասիկ հայերուն պատմածը այս վանքին մասին:

Այս նկարագրած ճամբէն թէ՛ Պարսկաստան գացող եւ թէ՛ Պարսկաստանէն եկող Հայերուն սովորութիւնն է երթալ իրենց սէտար կատարել Երեք Եկեղեցիները, ու կարաւանը սովորաբար հինգ-վեց օր կը կենայ հոն, որու միջոցին կ'երթան խոստովանել ու թողութիւն ստանալ Պատրիարքէն:

Պատրիարքը իրեն իրաւասութեան տակ ունի քառասունեօթը Արքեպիսկոպոս, ու իւրաքանչիւր Արքեպիսկոպոս չորս-հինգ թեմակալ ունի որոնց հետ միաբանօրէն կ'ապրի վանքի մը մէջ, ուր իրենց ձեռքին տակ ունին արեւաններ: Պատարազը ընկել յետոյ, որ ընդհանրապէս ցերեկուան ժամը մէկին կ'աւարտի, ամենքն ալ կ'երթան դաշտը աշխատիլ իրենց ապրուստին համար: Մեծ Պատրիարքին եկամուտն է վեց հարիւր հազար սկուտ կամ ասոր ժօտ, եւ տասնըհինգ տարեկանը անցուկ բոլոր Հաբրիստոնեաները պարտին տարեկան հինգ սօլ վճարել իրեն: Սակայն շատեր կան որ կարողութիւն չունին վճարելու. բայց հարուստները այս պակասին տեղը կը լեցնեն, եւ կան որ մինչեւ երկու կամ երեք սկուտ կուտան: Այս բոլոր ստակը Պատրիարքին քսակը չի մնար, տարի կայ որ ստիպուած է վրան բան մը աւելցնել իր խնայողութիւններէն, ու նոյն իսկ պարտքի տակ մանել ազատելու համար խեղճ Հայեր որոնք կարողութիւն չունին խաբածը վճարելու, այսինքն տարեկան տուրքը զոր կը պարտին մահմեդական իշխաններուն որոնց տիրապետութեանը տակ կը գտնուին. ապա թէ ոչ կարելի է վախնալ որ հարկը այդ խեղճ մարդիկը ստիպէ մահմեդականութիւնը ընդունելու, կամ թէ իրենց կիներովը ու զաւակներովը վաճառուելու. մեծ Պատրիարքը կարելի եղած դարմանը կը տանի այս բանին: Իւրաքանչիւր Արքեպիսկոպոս իր իրաւասութեանը շրջանին մէջ այս գործին համար հարկ եղածին ցուցակը կը դրիէ անոր, ու այսպէս Պատրիարքը մէկ կողմէն առածը միւս կողմը կը ծախսէ, անձնապէս ո եւ է օգուտ չբաղելով այն ութսուն գիւղերուն եկամուտէն որոնք, ինչպէս ինծի հաւաստեց սուրբ Ստեփաննոսի Արքեպիսկոպոսը, իր ձեռքին տակն են:

1665ին Պարսկաստանէն դարձած ատենս, փետրուարի վերջերը, Երեք Եկեղեցիներէն անցայ: Մեր կարաւանը տասնըմէկ օր կանգ առաւ հոն, թէ՛ անոր համար որ առատ ձիւնը ճամբաները ցոցած էր, եւ թէ՛ անոր համար որ Հայերը կ'ուզէին Բարեկենդանը հոն անցընել եւ

ուխտերնին կատարել: Հասնելու յաջորդ օրը այցելու թեան գացել Պատրիարքին, ու ինծի ոտքուցին սենեակ մը ուր Պատրիարքը նստած էր խորի մը վրայ, արեւելեան ձեւով առջերը ծալապատիկ, մեր գերձակներուն պէտ: Չորս Արքեպիսկոպոս ու ինը Եպիսկոպոսնոյն ձեւով նըստած էին սենեակին չորս քողորքը, ու այս Եպիսկոպոսներուն մէջ հաս մը կար որ բաւական լաւ իտալերէն կը խօսէր: Պատրիարքը ինծի շատ լաւ ընդունելութիւն քրաւ, եւ գրեթէ երեք ժամ մնացի զովը: Մեր խօսակցութեանը միջոցին յայտնեց որ շատ ուրախ պիտի ըլլար տեսնելով մէկ քանի ֆրանսացի կրօնաւորներ՝ մտերմօրէն խօսակցելու համար անոնց հետ, որովհետեւ գիտէր թէ Ֆրանսացի ազգը բարեհամբոյր ու քաղաքավար է, մինչդեռ Իտալացին ամէն գործ կ'սիրուի կը տեսնէ: Այս խօսքին վերայ էինք երբոր ներս մտաւ վանքին արեղաներէն մէկը, որ քոսներկու տարիէ ի վեր բերանը բացած ու մէկու մը խօսած չէր, այսպէս ուխտած ըլլալով: Արեւելի մէջ շատ կրօնաւորներ կան որ ատկից աւելի տաժանելի ուխտեր կ'ընեն: Այդ արեղայէն աւելի պճապատելու աւելի գիտակցեալ մարդ տեսած չէի, եւ Պատրիարքը գիտամբ բերել տուած էր զանի: Իր իշխանութիւնը ի գործ դրաւ՝ անոր խօսել տալու համար իր լուսթիւնը, եւ անոր հրամայեց որ խօսի, ան ալ անմիջապէս հնազանդեցաւ:

Պատրիարքէն հրաժեշտ առնել կ'ուզէի երբոր ճաշ բերել տուաւ, որ կը բաղկանար պանիրէ, տոնձէ, ինձորէ և տեսակ մը սոխէ: Երբոր ամէնը սոֆրային վրայ դրուեցաւ, որ գետինը փռուած կաշի մըն է, Պատրիարքը աղօթքը քրաւ ու հացը օրհնեց, յետոյ ջարդեց եւ իւրաքանչիւրին մէկ մէկ կտոր տուաւ, իրեն համար պատառ մը միայն տանելով: Գինին ալ օրհնեց, բայց ինք բնաւ չխմեց, ու ես տանձ մը ուտելէ եւ դաւաթ մը խմելէ յետոյ, հրաժեշտ առի Պատրիարքէն եւ մեկնեցայ: Տեղը եկած ատեն պիտի գրուցեմ հայ կղերին ազդելու եղանակը եւ մեծ խտտամբ բերութիւնը, եւ թէ ի՞նչքան խտտութեամբ կը պահեն մեծ պահքը եւ պահքի միւտ օրերը, որոնք տարուան վից ամիսն աւելին կը գրաւեն:

Որչափ ատեն որ կարաւանը Երեք Եկեղեցիները կեցաւ, Պատրիարքը ամէն օր պատիւ քրաւ ինծի զրկելու սեխ եւ ուրիշ պտուղներ, եւ յաճախ ասոնց կը միացնէր երկու երեք ոտք երկայնութեամբ չնտիր գեղարքունիներ:

Բարեկենդանի շաբաթ իրիկունը Պատրիարքը մարդ զրկեց հրաւիրելու բոլոր կարաւանը, տէր ու սպասաւոր, կիրակնօրուան պատարագին ներկայ գտնուելու եւ յետոյ վանքը ճաշելու: Այդ կիրակին Հայերուն համար իրենց բարեկենդանի վերջին կիրակին է, ու յաջորդ օրը մեծ պահքը կը սկսին: Եկեղեցիէն ետքը, ամէն մարդ հաւաքուեցաւ տանըհինգէն քսան ոտք լայնութեամբ կամարակապ մեծ ձեւակից մը, որուն երկու կողմին երկայնութեամբ քարէ սեղաններ կան, պատին երկայնութեամբ ալ քարէ նստարաններով: Ճեմելիքին ծայրը չորս ոտքով ուրիշ սեղան մը կը գտնուի, որուն վերեւ կամար մը կայ չորս անկիւնները չորս սիւներով, եւ ասիկա իբր ամպհոս վանի կը ծառայէ սեղանին: Դիմացը աթոռ մը կայ կաթողիկոսին համար, ուսկից կրնայ ամբողջ ձեւակիցը

տեսնել, եւ ալ ու ձախ կողմը երկու աթոռներ՝ երկու Արքեպիսկոպոսներու համար: սեղանը ու աթոռներն ալ քարէ են: Միւս Արքեպիսկոպոսները, Եպիսկոպոսները, Արեղաները եւ Հրաւիրմանները նստած էին երկու երկայն սեղաններուն շուրջը: Ճեմելիքին միւս ծայրը, կաթողիկոսին սեղանին գիմաց, պզտիկ դուռ մը կայ, առջին երեք աստիճան սանդուղով մը ուսկից կերակուր կը բերեն խոհանոցէն: Մեզի հրամցուած կերակուրներն էին զանազան գոյներով մէկ քանի տեսակ բիլաւ, ընդամէնը քառասուն տեսակ ուտելիք հրամցուցին. բայց իւրաքանչիւր պնակ այնչափ մեծ ու այնչափ առած էր որ մէկ մարդու մը լիուլի կը բաւէր: Ամենքն ալ գետինը դրին կաթողիկոսին առջին, սր, պնակները բացուելէ յետոյ, ոտքի ելաւ, բոլոր կոչնականներն ալ ոտքի ելան, եւ աղօթք քրաւ քրահնեց կերակուրները: Ան ատեն վեց Եպիսկոպոս մեծ պաշտներով այդ մեծ պնակներէն կտորները տանելով աւելի փոքր պնակներու մէջ դրին, եւ երկու երկայն սեղանները անոնցմով լեցուեցան: Իւրաքանչիւր ոք իր հոյէ մեծ բաժակը ունէր զոր դինիով կը լեցնէին՝ պարպուելուն պէս, և դինին շատ լաւ էր: Գալով կաթողիկոսին եւ իր սեղանը բազմող երկու Արքեպիսկոպոսներուն՝ անոնց երկուքական հակիթ միայն հրամցուեցաւ՝ մէկ քանի խոտեղէններով, ինչպէս նաեւ միւս Արքեպիսկոպոսներուն ալ սրոնք հրաւիրեալներուն սեղանը բազմած էին: Մէկ քանի Եպիսկոպոսներ ալ գտնուեցան որոնք քիչ մը ձուկ միայն կերան, ու գինի չխմեցին:

Սեղանին վերջանալուն մօտ Եպիսկոպոս մը ձեռքը թուլով մը եւ կաղամար մը սեղաններուն երկայնքը պտտելով հարցուց իւրաքանչիւրին մէջ թէ ի՞նչ կ'ուզէին տալ Եկեղեցիին, եւ իւրաքանչիւրը իր շերմառանդութեանը համաձայն տուաւ: Եպիսկոպոսը այդ միջոցին կոչնականներուն անունը եւ տալիք նուէրներուն քանակութիւնը միայն կը գրէ, եւ նուիրատուները հետեւեալ օրը կը վճարեն: Հարուստ վաճառականներ կան որոնք մինչեւ երկու թուաման կուտան, եւ սպասաւորի մը էն քիչ տուածը նոյնի մըն է: Ես Եպիսկոպոսին չորս թուաման գրել տուի, որ վաթսուն սկուտին աւելի կ'ընէ, պայմանաւ որ յաջորդ օրը պատարագէն ետքը աղօթք կատարուի իմ թագաւորին և Օրլէանի Դուքսին համար՝ որուն հետևորդներէն ըլլալու պատիւը ունէի: Այս մասին ինծի պատասխան չտուաւ, բայց գնաց կաթողիկոսը գտաւ որ անմիջապէս զինքը ետ դրկեց ինծի ըսելու թէ նոյն իսկ եթէ բան մը չի տայի, իրենք պարտաւոր էին Աստուծոյ աղօթել առաջին ֆրիստոնեայ թագաւորին, Օրլէանի Դուքսին և բոլոր Արքայական ընտանիքին համար: Եպիսկոպոսը գիրը վերջացնելուն, պնակները վերցուցին եւ Պատրիարքը գոհունակութեան աղօթքը քրաւ: յետոյ պտուղներ եւ մեծ քանակութեամբ սեխ բերին: Քիչ ետքը իրիկուան ժամերգութեան կոչնակը հնչեց եւ ամէն մարդ Եկեղեցի գնաց: որովհետեւ ալ հոս թիւրքիա չենք ուր բրիտանականներուն արգելուած է կոչնակ գործել, Պարսից թագաւորը ամէն բան կը թողարկէ իրենց, եւ Հայոց բոլոր եկեղեցիները, որոնք կարողութիւն ունին, կոչնակ բերել տուած են Բըքրիստոնեայ Աշխարհէն:

Իրիկուան ժամերդուծենէն ետքը կաթողիկոսը մարդ զրկեց ինծի ըսել տալու որ իրենք սովորութիւն չունէին այդ օրը սրիշ օրորնէ աւելի զուարճանալու, բայց զիտէր թէ Եւրոպայի քրիստոնեաները մեծ խրախճանութիւններ կ'ընէին, ուստի կ'ուզէր որ ես եւ միւս վաճառականները որոնք Քրիստոնեայ Աշխարհը կ'երթայինք՝ գումէլի մարտի մը հանդիսանալու ըլլալով զուարճանայինք: Այս երկրին մէջ մեծ քանակութեամբ գումէլ ռոնին զօրոնք հերկի աշխատութեանց կը գործածեն, եւ էգերէն առատ կաթ կը քամեն, որով կարծեմ ու պանիր կը պատրաստեն, եւ ուրիշ կաթերու հետ կը խառնեն: Էշեր կան որոնք օրական մինչեւ քսաներկու «բինդ» կաթ կուտան:

Այդ մարտը տեսնելու համար, մեզի տարին պատե-  
րով շրջապատեալ մեծ հրապարակ մը ուր ութ գումէլ կար: Զանոնք իրարու դէմ զբզակու համար՝ կարմիր լաթ մը ցոյց տուին անոնց, որով նախ անանկ կատարեցան որ եղ-  
ջիւրի առաջին հարուածներուն՝ երկուքը զիտապատս գե-  
տին փուռեցան, եւ միւսներէն ոչ մէկը մնաց որ չհաշ-  
մուէր: Մարտէն ետքը, մեծ քանակութեամբ փայտ բերին ու զիզեցին՝ վառելու համար, ինչպէս Յրանսա կ'ընեն Սէն-Ժանի տօնին նաւակասեղին: Խարոյկը պատրաս-  
տուելէ յետոյ, Արքեպիսկոպոսներէն մին ճրագուէ մոմեր տուաւ այն բարձր ներկաներուն, թէ՛ աւերուուն եւ թէ՛ ըս-  
պասարներուն, որոնք իրեն յայտնեցին թէ յաջորդ օրը ինչ պիտի նուիրեն մոմին համար: Մոմերը վառելէ ետ-  
քը, ամէն մարդ իր մօրը ձեռքը բռնած, կաթողիկոսը՝ Ե-  
պիսկոպոսի խաչի ձեռով գաւազան մը ձեռքը սկսաւ քա-  
լել աղօթք մը երգելով, եւ բարձր Եկեղեցականներուն ու Աշխարհականներուն հետ երեք անգամ խարոյկին բոլոր-  
աիքը դարձաւ: Որովհետեւ խարոյկին կրակ տալու վայր-  
կեանը եկած էր, վաճառականներէն մին ըսաւ թէ այդ պատիւը ինք ունենալու համար՝ սաչափ քանակութեամբ իւր կուտայ Եկեղեցիին կանթեղներուն. ուրիշ մը քանա-  
կութիւնը աւելցուց ու աւելին տալ խոստացաւ. երրորդ մը ալ աւելի տալ խոստացաւ, ու վերջապէս խարոյկին կրակ տալու պատիւը ամենէն աւելի խոստացողին մնաց: Անք միջապէս քան մարդ մօրը մարեց՝ մեծ խնամքով զայն պահելու համար, որովհետեւ կը հաւատան թէ երբոր ծո-  
վի վրայ են եւ փոթորիկ ծագի, այն մոմերէն մին վառե-  
լով եւ մէկ քանի աղօթք ըսելէ ետքը ծովը նետելով, փո-  
թորիկը անմիջապէս կը դադրի: Հետաքրքիր եղայ հար-  
ցնելու իրենց թէ այս կրակին զւ մոմերուն արարողութեան ծագումը ո՛ւսկից էր, եւ ահաւաստի տուած պատասխան-  
նին: Աստուածածինը, ըսին, տղաբերք քառասուն օր ետքը Երուսաղէմ եկաւ իր Յիսուս Որդոյն եւ Յովսեփի հետ, եւ Սիմէոնի գանուած տաճարը երթալով, սուրբ ծե-  
րունին Փրկիչը գիրկը առաւ եւ սկսաւ Փառաբանութիւնը, «Տէր, արդ արձակէ իս կապանքէ» եւ այն: Փառաբանու-  
թենէն ետքը բոլոր ժողովուրդը սկսաւ աղաղակել թէ Տէ-  
րը ծնած էր, եւ տաճարէն ելլելով ամբողջ քաղաքին մէջ բարձրաձայն հռչակեց աւետիսը: Որովհետեւ գիշեր էր՝ ամէն մարդ տաճար կը վազէր ձեռքը մամ բռնած, եւ շա-  
տեր կրակ կը վառէին իրենց զաններուն առջեւ՝ ուսկից կը

կարծէին թէ Տէրը պիտի անցնէր: Ահաւաստի ինծի ըսած-  
նին: Հայերը իրենց լեզուով «Տեանընդառաջ» կ'անուա-  
նեն այս արարողութիւնը: Հանդէսը վերջանալէն ետքը, կոչնակը հնչուեցաւ, նորէն Եկեղեցի գացին, եւ յետոյ ամէն մարդ իր տեղը քաշուեցաւ: Ամբողջ գիշերը, Հայե-  
րը, տէր ու ծառայ, անդադար խմեցին՝ բարեկենդանը վերջացնելու համար, մինչդեռ կաթողիկոսը իր կողմէ-  
նեկեղեցին զարդարելու հոգ կը տանէր իր ամենէն գեղեցիկ զարդերով:

Երբեք չէի կարծեր որ Մահճետականներու տիրապե-  
տութեան տակ գանուող քրիստոնեայ Եկեղեցիները այդ-  
քան հարստութիւն ունենային: Հարիւր տարի առաջ՝ այս կաթողիկոսական Եկեղեցին այսչափ լաւ զարգացուած չէր, եւ արդի հարստութիւնը կը սկսի այն օրէն ուր Պար-  
սից Ենէ-Աբաս Մեծ Թադաւորը Հայերը մղեց վաճա-  
ռականութեան, որով հարստացան: Որովհետեւ սիրզնե-  
րը մեծ շահեր կ'ընէին, յաճախ միւս կը կատարէին եւ առատօրէն կուտային այս Եկեղեցիին, ուր այսօր այնքան ճոխ զարդեր կան որքան քրիստոնէութեան ո եւ է Եկեղե-  
ցիին մէջ: Եկեղեցիին գասին շուրջը զարդարուած էր վե-  
նետիկի ոսկի ճամուկով, եւ եկեղեցիին մէջաեղը, դասը, ինչպէս նաեւ խորանին աստիճանները ծածկուած էին թանկագին գորգերով: Գիտնալու է որ Եկեղեցին մասնել-  
ածաջ ամէն մարդ զննամանը կը հանէ, եւ Հայերը ծոն-  
գի չեն դար ինչպէս կ'ընեն Եւրոպա, հասարակ վրայ կը մնան: Պատարագին առեն՝ ծալապատիկ նստած են. բայց Աւետարանը կարդացուած առեն զլուսինին վրց է, բացի միայն երբոր Սուրբ Հաղորդութիւնը վեր կը բարձ-  
րացնեն. ան առեն ամենքն ալ զլուսնոցնին կը հանեն եւ երեք անգամ երկրպագութիւն կ'ընեն: Խորանին վրայ խաչ մը կար վեց սակի աշտանակով, եւ աստիճաններուն վրայ շորս արծաթ աշտանակ՝ հինգ ոտք բարձրութեամբ: Ահի քանի աղօթք երգուելէն ետքը, կաթողիկոսը եկաւ բազմեցաւ մետաքսէ դորգով մը ծածկուած աթոռ մը, եւ իր աջ կողմը շորս Արքեպիսկոպոսնստած էին: Արքեպիս-  
կոպոս մը մատուց պատարագը հանդիտաւորապէս՝ երկու Եպիսկոպոսի սպասաւորութեամբ: կաթողիկոսը յետոյ ա-  
ղօթք կատարել տուաւ Թագաւորին եւ Օրլէանի Դուքսին համար. յետոյ Արքեպիսկոպոսը առաւ գիրքը որսն մէջ Աւետարանը կարդացած էր ու համբուրել տուաւ կաթու-  
ղիկոսին, Արքեպիսկոպոսներուն, Եպիսկոպոսներուն, եւ բոլոր ժողովուրդին: Այդ գրքին կափարիչին մէկ կողմը ընդելուզեալ մասունքներ կան՝ բիրեղով ծածկուած, եւ գրքին այդ կողմն է որ համբուրել կուտան: Պատարագէն յետոյ, կաթողիկոսը օրհնեց ժողովուրդը, շատեր գացին անոր աջը համբուրելու, եւ ամէն մարդ իր տեղը քաշուե-  
ցաւ:

Ժ. Պ. ԹԱՎԷՐՆԻԷ

Ֆ Ր Ա Ն Ս Ա Յ Ի

ԱՐՏԻԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(3)

Դ.

Քոնթրեքսէլի Լոպանոֆ իշխանին եւ Պ. Հանսթոյի տեսակցութենէն յետոյ Ֆրանսա այլ եւս միջնորդ մը չէր Ռուսիոյ եւ Անգլիոյ միջեւ, հապա անոնցմէ մէկուն օժանդակը միայն:

Արտաքին երեք պաշտօնատններուն համար համաձայնութիւնը անհնարին դարձած ըլլալով, ընկիւք ուրիշ բան չունէին բայց եթէ թղթակցութիւններ փոխանակել Գրան ներկայացուցած առաջարկներուն վրայ: Ու այս միջոցին օսմանեան կայսրութեան զանազան կողմերը հոգը կը տաանէր: Ֆրանսա եւ Աւստրիա յաջողեցան հանգարտեցնել Պուլկարիա սկսուած յուզումը: Բայց 1895 օգոստոսին մէկէն ի մէկ կրեաւ ապստամբական շարժում մը պայթելով կացութիւնը ծանրացաւ: Կրեալի հրդեհը Հայաստանէն աւելի վտանգաւոր էր. ապստամբութեան շարունակութիւնը կրնար Յունաստանի միջամտութիւնը հրաւիրել. Պալքանեան պետութիւններն ալ դժուարութիւններ կը յարուցանէին: Պէտք էր Կրեալացիներուն քիչ մը զոհունակութիւն տալ, մանաւանդ բարուքել թիւրքիոյ ընդհանուր կացութիւնը սր հետզհետէ կը վտարանար: Ամէն կողմ ջրիստոնեայ ժողովուրդները անհանգիստ էին իրենց գլխուն վրայ առկախ սպառնալիքի անձկութեան տակ, եւ զբացումին էր թէ Եւրոպայէն արդիւնաւոր ո՛ր է պաշտպանութիւն կարելի չէ յուսալ: Եւ արդարեւ սուլթանին ալ սիրաբ Եւրոպայի կողմէ հանգարտ էր: Երբ 1895 սեպտեմբեր 30ի կոտորածը տեղի ունեցաւ Պոլիս, զեպանները երկու օր վերջը միայն խիստ ծանուցադիր մը տուին Գրան, ըսելով թէ «Եւրոպայի խղճմանըը պիտի զայրանար եթէ կառավարութեան անգործութիւնը բաշխերէր այսպիսի ցաւալի կրքեր»: Սակայն սուլթանը պիտէր թէ ինչ էր «Եւրոպական խղճմանը» ըսուածը ու կը խնդար:

Եւրոպայի մէկ մասը 1895ի հոկտեմբեր ամսուն կը շնորհաւորէր սուլթանը հայկական տազնապին յաջող ելք տուած ըլլալուն համար, վասն զի բարեկարգութիւններու մայիս 11ի ծրագիրը կրճատեալ ընդունուած էր, ու պետութիւնները կռուելէ ձանձրացած զայն ընդունել էին: Լոպանոֆ իշխանը հոկտեմբեր 30ին Ֆրանսայի գործակատարին ապահովութիւն կուտար թէ «անմիջական ապագայի մը համար չէր նախատեսեր միջադէպ մը որ հարկադրէր պետութիւնները աւելի զօրեղ հանգամանք տալ թիւրքիոյ դէմ իրենց միջամտութեանը:»

Այս լաւատես կանխագուշակութիւններէն ջրան օր առաջ Տրապիզոնի շարքը տեղի ունեցած էր. չինք գիտեր թէ ինչ տպաւորութիւն առաջ բերաւ Բարիզ եւ Բեզդուրկ, բայց Վիէնայէն առաջարկ մը ներկայացուցաւ: Կոմս Կոլուխովսքի կը խնդրէր բոլոր պետութիւններէն պնդել ձեռք բերելու համար «այնպիսի արդիւնաւոր միջոցներ ու «րոնք օսմանեան կայսրութեան բոլոր ջրբառնաները

«պաշտպանելու բաւական ըլլան: Սուլթանին եւ իր կտուաւ «վարութեան յստակօրէն պէտք էր ազգարարել թէ պատահելիքներու համար պատասխանատու պիտի բռնուին: «Աւստրիա մինչեւ հիմա մեկուսացեալ կը մնայ, բայց կ'իւրեւի թէ կը մտանայ աղէտ մը որուն մէջ իր շահերն ալ «կրնան փնտսուիլ:» Պ. Քանսպոն ալ երկար ատենէ ի վեր կը խօսէր այս «աղէտին» վտանգներուն վրայ: Արդ, Աւստրիա, Գերմանիա եւ Իտալիա որոշեցին ուժ տալ Անգլիոյ յարմար գտած միջոցներուն որպէս զի նորանոր ծայրայեղութիւններու առջեւ անեն: Այս որոշումը գտաւ պարտութիւնն էր երեք պետութիւններուն հետեւած բազաբախանութեանը: Տազնապին սկզբնաւորութիւնէն ի վեր Եւրոպայի այս միջամտութիւնն էր սր իրաւամբ վախ կ'ազդէր:

Կ'երեւի թէ սուլթանը մէկէն ի մէկ ինքզինքը աւելի հանգստացած զգաց: Ան ատենն է որ զործադրեց կտուրածներու ծրագիրը: Այս պարագային մէջ ալ Պ. Քանսպոն նախագուշակած էր ու ազգարարած 1895 հոկտեմբեր 30 ին. «Մեր հիւպատոսներէն ամէն օր ընդունած «բազմաթիւ հեռագիրներն եւ մանրամասն տեղեկագիրները մատնանիշ կ'ընեն ամէն կողմ միախմբաներուն «զրգոումը, քրիստոնեաներուն վրայ յարձակելու համար «իրենց բացէ ի բաց պատրաստութիւնները, զէնքերու «գնումը եւայլն: Անիշխանութիւնը ընդհանուր է, եւ յետագային «զափոխութեան թուականը բացուած է, անկարելի ըլլաւ «լով կանխատեսել ծագելիք հետեւանքները թէ՛ սուլթանին, թէ՛ թիւրքիոյ եւ թէ՛ Եւրոպայի համար:» Ու արդարեւ կանխատեսել անկարելի էր այլ եւս: Եւ սակայն այս կացութիւնը առաջ պիտի գա՞ր եթէ երեք պետութիւնները համաձայնած ըլլային սուլթանին կարուկ խօսելու ու իր մօրթին մէջ այդ գողգողացող սարսելու: Անարդարանալի են ան ատեն գործուած սխալները, եւ ատենը ընդունելը ծանր պատասխանատուութեան տակ են:

Երբ Պ. Քանսպոնի այդ զեկուցումը Բարիզ հասաւ, նոր դահլիճ մը կազմուած էր. նախարարապետը՝ Պ. Պուլոտա, եւ արտաքին գործերու նախարարը՝ Պ. Պէրթլը: Ֆրանսայի քաղաքականութիւնը պիտի փոխուէ՞ր: Այս մասին Դեղին գիրքը շատ կրճատուած ըլլալով շատ բան չկնք կրնար գիտնալ: Նոր նախարարութեան ընթացքը փայլուն չեղաւ, բայց արտաքին գործերը արդէն սկզբնութեան մը մէջ էին, ու յետոյ, ուրիշ ինչիւրներ ծագեցան, մասնաւորապէս Եգիպտոսի կողմը: Այսու հանդերձ Պ. Պուլոտայի նախարարութիւնը զանազան օգտակար միջոցներ ձեռք առաւ. սակայն աւելի դժուարին էր վեց պետութիւններուն համերաշխութիւնը բան թէ երեքինը: Լոպանոֆ իշխանը կը շարունակէր ընդգլխմանալ արդիւնաւոր ո՛ր եւ է միջոցի. Բեզդուրկի Ֆրանսական զեպանին կ'ըսէր թէ սուլթանը ստիպելու ո՛ր է ձեռնարկ «կրնար ծանր խառնակութիւններ առաջ բերել:» Եւ քիչ մը ետքը, երբ թիւրքերը բռնի կ'իշխամանէին Հայերը, այս պագալի գործին առթիւ Լոպանոֆ կը յայտարարէր թէ «վերջապէս ամէն մէկ գէպքի համար սուլթանին յանդիմանութիւն ընել կարելի չէ:» Հակառակ ամէն-բանի կ. Պոլսոյ Ֆրանսական զեպանը միշտ կ'որովալի կը հանդիսանար:

1895ի կոտորածներուն պաշտօնական ցուցակը կը պատ-  
րաստէր ու Դրան կը հաղորդէր. կ'աշխատէր սուլթանէն  
ձեռք բերել իր կառավարութեան բարենորոգումը:

Ու շարքերը կը յաջորդէին շարքերուն: Զարհուրելի  
թուականը եղաւ առ: Օսմանեան կայսրութեան այլեւայլ  
կողմերը վրդովիչ նշաններ երեւան կուգային: Սուրիա եր-  
կու անգամ խռովեցաւ. Կրեաէ յուզումը կը շատնար: Պե-  
տութիւնները կը ջանային համոզել թիւրքիան կրեաական  
ապստամբութեան վտանգին համար. յունական կառավա-  
րութիւնը կը ծանուցանէր թէ ուզիզ ընթացքի մը հետեւելով  
հանգերձ պիտի չի կրնար անտարբեր մնալ եթէ կրեաական  
տառապանքները երկարէին: Բայց թիւրքիա իրեն տրուած  
խորհուրդներուն պատասխանեց կրկնապատկելով խստու-  
թիւնները: Այս միջոցին, 1896 ապրիլ 30, ֆրանսա-  
կան գահէինը նորէն փոխուեցաւ, Պ. Մէլին նախարարա-  
պետ եղաւ, Պ. Հանութօ ալ արտաքին գործերու նա-  
խարար:

Ֆրանսայի եւ Ռուսիոյ արտաքին գործերու երկու նա-  
խարարներն ալ լուրջ պատճառներ ունէին իրենց արտա-  
քին քաղաքականութիւնը համաձայնութեամբ փոխելու  
երկուքն ալ բոլորովին խաբուած էին. շարքերը իբր ան-  
կարելի դիպուածներ համարած էին. արդ այդ «դիպ-  
ուածները» 1895 հոկտեմբերէն ի վեր սեղի ունեցեր  
էին, ու միեւնոյն կացութիւնը դեռ կը շարունակէր 1896ին:  
Ինչո՞ւ մէկտեղ չըլլին, կամ թէ մէկը միւսին չըռաւ.  
«Խաբուեր ենք»: Միեւնոյն քաղաքականութիւնը անողո-  
քելի կերպով շարունակեցին: Ֆրանսա վեց պետութիւն-  
ներու բանակցութիւններուն մէջ պարզ օժանդակ մը մնաց,  
ինչպէս մնացած էր երեք պետութիւններու բանակցութեա-  
նը մէջ. և ամբողջ Եւրոպա կը դիտէր թէ Ֆրանսա իրեն  
յատուկ ո՛ր եւ է կարծիք չունէր: Կրեաէի խնդիրն մէջ մենք  
կարծիք մը ունենալու իրաւունքին տէրն էինք, վասն զի  
սերիշներէն աւելի շահ ունէինք վերջ գնելու կրեաական  
խռովութիւններուն որոնք կրնային Յունաստանի միջա-  
մտութիւնը հրաւիրել, վասն զի Յունաստանի անտարբեր  
չէինք կրնար մնալ:

\* \* \*

Պ. Լավիս Կրեաէի խնդրին մէջ Պ. Հանութոյի հետե-  
ւած քաղաքականութիւնը խստի ու երկարօրէն բնագա-  
տելէ յետոյ կը վերագոհնայ նորէն հայկական խնդրին,  
Պանք Օթոմանին օգոտտոս 14-26ի դէպքին առթիւ: Կը  
շարունակենք ամփոփել:

\* \* \*

Սուլթանը ազէկ դիտէր թէ Եւրոպայէն վախնալու  
բան մը չունի. օսմանեան իշխանութիւնը շաբաթներէ  
ի վեր իմացած թէ զաւ մը կը պատրաստուի, ուստի ինքն  
ալ պատրաստեց սուկալի կոտորածները որոնք դեսպան-  
ներուն աչքին տակ տեղի ունեցան եւ շարունակեցին:  
Բայց պահ մը յուզում եւ զայրոյթ տիրեց ու կարծուե-  
ցաւ թէ քաղաքականութեան մէջ բան մը պիտի փոխուի:  
Կ. Պոլսոյ շարքերուն լուրին հետ գրեթէ միեւնոյն ատենը  
հասաւ Լոպանոֆ իշխանին մահուան լուրն ալ:

Այդ կոտորածներէն ետքն ալ Ֆրանսա կը շարունա-  
կէ իր վարանոս ընթացքը: Պ. Հանութոյի եւ Բարիզի

օսմանեան դեսպան Միւնիթր պէյի տեսակցութիւնները  
տիրուր գաղափար մը կուտան Ֆրանսայի արտաքին գոր-  
ծերու նախարարին մտքին ուղղութեանը վրայ:

Սեպտեմբեր 1ին Պ. Հանութօ կը կանչէ Միւնիթր պէյը  
եւ կ'ըսէ թէ «անկարելի կ'ըլլայ նոյն իսկ սուլթանին բա-  
րեկամեան զինքը պաշտպանել»: Շատ ցաւալի է այս  
«բարեկամեանը» բառը կարգալ: Կորովի լեզուով կը խօսի  
Միւնիթր պէյին. «Բարենորոգութիւնները պէտք է գործադր-  
ւին, զինուորական իշխանութիւնները եւ իսլա մեքը սան-  
ձահարուին եւ հանդարտութիւնը վերահաստատուի մաս-  
նաւորապէս Կ. Պոլիս»: Բայց այս մասն աւսրա պէսը  
ուելի ցաւալի է կարգալ: Ներքին միտքն այն է թէ այս  
գործերը երբ տեղի կ'ունենան Կ. Պոլիս, այնքան Եւրո-  
պացիներու աչքին տակ, իրաւ որ շատ աղմուկ կը հանեն:  
Ու նախարարը կը շարունակէ. «Եթէ ոչ կը վախնամ որ  
մեր այս տեսակցութիւնը վերջինն երէն մէկը ըլլայ»: Բայց  
Միւնիթր պէյ որ պաղարին մարդ մըն է, այս վա-  
խերէն ոչ մէկը ունեցաւ, վասն զի դիտէր թէ Ֆրանսայի  
նախարարութիւնը Դրան ներկայացուցիչներուն չէր զլա-  
նար պարտուպատշաճ յարգանքներէն ո՛չ մէկը:

Այս դէպքերէն ետքը Նիքոլա Բ. կայսրը Բարիզ կու-  
գայ. դեռ ժամանակն էր ուրիշ ուղղութիւն մը տալ Ֆրան-  
սայի արտաքին քաղաքականութեան. բայց Պ. Հանութօ  
թիւրքիոյ պարտապահանջներուն միայն կը մտածէ եւ  
կայսեր կ'առաջարկէ ուստական ներկայացուցիչ մըն ալ  
մտցնել Կ. Պոլսոյ Հանրային Պարագի վարչութեան մէջ.  
առաջարկը կ'ընդունուի, բայց ետքը Բեդրպուրի կը մեր-  
ժուի: Ընդհանուր քաղաքական ուղղութեան մէջ ընաւ  
փոփոխութիւն չի մտցուիր: Միայն թէ հոկտեմբեր 22ին  
կը զեկուցուի Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպանին որ Ռու-  
սիոյ ներկայացուցչին հետ պէտք է մէկտեղի իրենց միա-  
պաշտօնակիցներուն՝ որոշելու համար բարեկարգութիւն-  
ները, «առաջնորդուելով հայկական բարենորոգութիւն-  
ները, կրեաական պայմանագրութեան եւ սուլթանին յաճախակի  
խոստումներէն»: Միշտ յամբընթաց քաղաքականութիւնը,  
միշտ ծոպատկին թողու քաղաքականութիւնը:

Բայց զրուագ մը շատ գէշ գաղափար կուտայ Ռու-  
սիոյ եւ Ֆրանսայի արտաքին պաշտօնատաներու փոխա-  
դարձ յարաբերութեան մասին: Ֆրանսայի կառավարու-  
թիւնը հոկտեմբեր 21ին Լորտ Սուլպերիէն կը ստանայ  
յիշատակագիր մը եւ այս առթիւ կը գրէ Բեդրպուրիի Փը-  
րանսական դեսպանին որ անշուշտ Ռուսիոյ գահինն ալ  
ստացած է այդ յիշատակագիրը, որուն պատասխանելէ ա-  
ռաջ Ֆրանսայի արտաքին պաշտօնատան նախարարը կը  
փափաքի Ռուսիոյ արտաքին պաշտօնատան հետ նախա-  
պէս համաձայնիլ. «Ուստի եւ Պ. Շիշքինի կարծիքը իմա-  
նալու մեծ կարեւորութիւն կ'ընծայէ»: Երկու ամիս անց-  
նելէ ետքը լորտ Սուլպերի կրկին կը գրիմէ Պ. Հանութոյի  
պատասխան մը ստանալու: Պ. Հանութօ ինքն ալ կրկին  
Բեդրպուրի կը գրիմէ. ու ահա իրեն կը հաղորդուի որ Պ.  
Շիշքին իր պատասխանը արդէն հաղորդած է լորտ Սուլ-  
պերիի, առանց կարեւորութիւն ընծայելու Ֆրանսայի հա-  
մաձայնութեան:

Ան ատեն կը բացուի խառնաշփոթութիւններու նոր

Թուական մը: Եւրոպա կը պատրաստէ սուլթանին ներկայացուցիչը բարեկարգութիւններու ծրագիր մը, բայց Ֆրանսա բանի մը պայման կը դնէ. — օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը շխտել, մէկ բանի պետութիւն միասին չմատակարարեն իրկիրը, ո՛ր է է կէտի վրայ ուրիշ պետութիւն մը առանձինն գործողութիւն չկատարէ: Ասոնցմէ զատ սուլթանը գիտէր թէ Բարիզի տկասկցութեան մէջ՝ երկու պետութիւնները համաձայնած էին «սուլթանին անձին պարտուպատշաճ յարգանքի համար»: Ասիէ աւելի ինչ կ'ըզէր, մանաւանդ որ Պ. Հանթօ երեսփոխանակին ժողովին մէջ այնչափ բան իրարու խառնած էր որ շարքերու համար սուլթանին պատասխանատուութիւնը կ'աներեւութանար, ուստի սուլթանը կրնար անվախ սպասել: 1897 Վիտրալար 9 ին վերջապէս բարենորոգումներու ծրագիրը ընցաւ, պատրաստ էր: Բայց արդէն կրեաւ հրդեհի մէջ էր ու շղթա էր սպասել լաւագոյն օրերու:

Եւրոպայի այս խառնակ վիճակին մէջ վերհերմ կայսրը ընդհանուր քաղաքական ուղղութիւնը ձեռք առաւ: Գերմանիա Արեւելքի գործերուն մէջ ամենէն նուազ շահունի, եւ սակայն 1894ի վերջի օրերէն սկսեալ Ֆրանսայի գործած սխմաներուն իբր անխուսափելի հետեւանքը եղաւ Գերմանիոյ գերակշռութիւնը Արեւելքի մէջ:

ԼՈՎԻՍ

Վ Ե Ր Զ

Ս Ա Ր Դ Ս Ը

Էմիլ Զուլա զատապարտուեցա՛ւ, մէկ տարուան բանտարկութեան:

Իր գոյութեանը հավար գողղացող կառավարութիւն մը, իր սխալը ճանչնալու բարոյական բաշտութիւնը չունեցող սպայակոյտ մը, յուսահատօրէն պաշտօնին կառած ողորմելի կրեսփոխանութիւն մը, անարգ ու շահամուտ մուսուլման մը, ու խելայեղ խուճան մը որ ա՛լ խորհիլ չի գիտեր, միացած՝ այս ապստակը տուին ճշմարտութեան ու Արարութեան:

Այս գատէն՝ Զուլա կ'ելլէ ալ աւելի խոշորցած, մեծ լուսապսակով մը, մարտիրոսութեան լուսապսակը: Ճըմարտութեան համար զոհուող մարդուն հոյակապ փառք ունի ան հիմակ, մշտնջենական փառքը զոր պատմութեան մէջ պիտի բաժնէ ճորտանօ Պրոնտներու, Գալիլէներու, Էդիէն Մարտէշներու հետ:

Իր նամակին մէջ, որ պատմութեան կը վերաբերի, կ'ըսէր. «Երբքը ճշմարտութիւնը հողին տակ կը պահէք, հոն կը դիզուի, պայթումի անանկ սեւ մը կ'առնէ որ, այն օրը ուր կը պոթիկայ, ամէն բան օդը կը հանէ իրեն հետ»: Ու գատարանին առջեւ իր ըրած յայտարարութեանը մէջ. «Ամէն բան ինձի գէմ ըլլալ կը թուի: Ես ինձի հետ ունիմ միայն գաղափարը, ճշմարտութեան ու արդարութեան գաղափարը: Ու հանգիստ եմ, պիտի յաղ-

թեմ: Զուգեցի որ երկիրս ստութեան զս անիրաւութեան մէջ մնայ: Իս կրնաք հարուածել այս տեղ: Օր մը Ֆրանսա շնորհապարտ պիտի ըլլայ ինձի՝ եր զատուր ժըրկելու օգնելու համար:»

Ու իրաւ է, պիտի յաղթէ: Գաղափարին ընթացքին մէջ, ինչ փոյթ վայրկեանական գաղաղները կամ նահանջները: Ալ աւելի ուժով յառաջ խաղալու, նոր կարող ու եռանդ ամբարեցու հպնգրուաններ են ազոնք, — կառակմբին պէս զր չլահ մը կանգ կ'առնէ՝ իր ածուխի ու ջրի մթերքը անեղու ոչ նորէն առաջ սուրալու համար, վերանորոգողած թափով մը:


Այն օրը, ինչքան գաճած պիտի երեւան այսօրուան կակողալից խալիկները, սոնքացող խամածիկները ոչ ամբարտաւան պնդկալէրները: Ու ինչ գեղեցիկ օր ձգիտի ըլլայ ան ուր Հեղեղը պիտի գայ մղեղի օդէն ալէ տանի այդ Սուտին առջեւ շորեթթթ երկրպագուները ու Շահուն ոտքերը լիողները՝ որոնք ճշմարտութեան երկսին կը թքեն ու Արդարութեան լիզու կը հանեն:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՏԻ ՈՒ ԲԱՃՆԵԿԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու Գաճիկին զրկել առ

L. FRANK,  
309, LADBROKE GROVE,  
(ENGLAND). LONDON, W.



ՆՈՐ ԿԵԱՆՔԻ բաժնեգինն է Եւրոպայի հասարակարկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տալար:

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15 ին

Արեւելքի համար (Պուլիարիա, Ռուսիանիա, Յուստան եւ այլն) կը խնդրուի ոսկի ֆրանքով հաշուել բաժնեգինը:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ և ԵՐՐՈՐԴ ԹԻԵՐԸ ՍՊԱՌՄՁ ըլլալով մեր մօտ, կը խնդրուի անոնցմէ որոնք այդ թիւերէն ունին «Նոր կեսնք»ի հաւաքածոյ կազմիլու մտաղիւր չեն, հաճիլ մեզ զրկել զանոնք: Իրական ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան մեզի ատով: Այդ թիւերուն փոխարէնը կը հաշուենք իրենց բաժանորդազրուութեան վրայ, զրկուած իւրաքանչիւր թիւի փոխարէն երկու թիւ:

Նոր բաժանորդ գրուողներուն ապիպուած մնքնաբերօր պիւնէն ոկոճալ զրկիլ: Այն բաժանորդներուն սակայն ունք յատկապէս մենէ խնդրեն ճառաջին երեք թիւերն ալ, կը ստոտանանք զրկել առ ի՞նչ պէս որ ու կնանք անոն մէ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱԺՈՆՈՐԴՆԵՐԷՆ կը խնդրենք որ իրենց բաժնեգինը մընի—օրտըրով զրկեն մեզ, փոխանակ թղթաղրամ—տոլարի: Մընի—օրտըրները պէտք է զըրկել Լ. Ֆրանքի տնտան, մեզի որոշակի յայտնելով զրկու զին անունը: